

Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Հայ-թուրքական հարաբերությունները.....1
- 2- Լուրեր – Իրանահայ համայնք.....2
- 3- Լուրեր – Հայաստան.....2
- 4- Լուրեր – Իրան.....8
- 5- Հասարակական.....9
- 6- Խոհեր12
- 7- Մշակույթ13

Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր- Իրանահայ համայնք1
- 2- Լուրեր-Իրան,Հայաստան.....2

Ճապիկի առաջին էջում՝

Արարատը սահմանի երկու կողմից

Վերջին էջում՝

«ԲաՖի»-ի լեռնագնացները

Համար 153, Հոկտեմբեր 2009 թ.

No. 152, October 2009

ماہنامہ لويس – شماره ۱۵۳ مهر ماه ۱۳۸۸

Հայ-Թուրքական հարաբերություններն ու իրանահայ համայնքը

Հայ-Թուրքական հարաբերությունների թեմայով է զբաղված ամբողջ հայ քաղաքական և ու հասարակական աշխարհը, կան լավատեսություններ, որպեսզի այս հարաբերությունները վերջ դնեն հավիտենական չհամարվող թշնամությանը, որը սերնացել է մեր երկու երկրների ժողովուրդների միջև, որպեսզի նոր ասպարեզներ բացվեն փոխադարձ հարաբերությունների ու տնտեսական զարգացման ուղղությամբ: Մինևույն ժամանակ կան մտահոգություններ, որ այս երկկողմ հարաբերությունների ստեղծումը չպայմանավորվի ցեղասպանության հարցում զիջումների գնալով, կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հաշվին: Առայժմ բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ գոյություն չունի որևէ պայման երկկողմ հարաբերությունների ստեղծման գործում: ԼՂՀ հարցի լուծման մասին էլ խոսվում է «Մադրիդյան սկզբունքներից» ելնելով:

ՀՀ-ում որոշ քաղաքական ուժեր այս թեմաների շուրջ խոսում են ըստ իրենց քաղաքական համոզմունքների և դիրքորոշումների, որ ունեն ՀՀ ներկա իշխանության նկատմամբ, և այսպիսով այս թեման նաև դառնում է շահարկման խնդիր իրենց նեղ կուսակցական կամ խմբային շահերի համար: Մեր իրանահայ համայնքում այս թեման օրակարգ է փոքրաթիվ մարդկանց շրջանում, որոնք հարում են շրջանակցական, կամ ոչ դաշնակցական շրջանակների : Ընդհանուր առմամբ իրանահայությունը ուզում է հավատալ և վստահել ՀՀ իշխանության վարած քաղաքականությանը:

Համայնքի հանրային կարծիքի վրա կազդեն դաշնակցությունը, իրանահայ մամուլն ու ոչ դաշնակցական շրջանակները: Արդեն մտավախություն կա, որ դաշնակցությունը, դեմ լինելով ՀՀ իշխանությանը, փորձի բացասական տրամադրություններ ստեղծի իրանահայության մեջ ՀՀ իշխանավորների նկատմամբ, որը շատ չի տարբերվում իրենց նախկինում դրսևորած հակահայաստանյան տրամադրություններից, որի դառն փորձը իրանահայությունը ունի և շոշափել է, տեսել է, թե ինչպիսի բացասական ազդեցություն է ունեցել այն երևույթը, երբ դու հուսախաբ ես անում ժողովրդին և վանում հայրենիքից, որի բացասական հետևանքները զգաց նաև դաշնակցությունը: Հասարակությունը տեսնելով, որ կուսակցությունն ավելի շուտ հետապնդում է իր քաղաքական շահերը և ոչ թե ժողովրդի կամ Հայաստանի համընդհանուր շահերը, կորցնում է իր վստահությունը կուսակցության նկատմամբ:

Հնարավոր է մոտ ապագայում ՀՀ իշխանության նկատմամբ դաշնակցության կոշտ դիրքորոշումների հետևանքով լարվածություն առաջանա համայնքում, նաև մի շարք ոչ դաշնակցականներ կսկսեն իրենց հակա հայաստանյան քարոզարշավը որը համահունչ կլինի դաշնակցության քարոզարշավին, իսկ մնացած ոչ դաշնակցականները պետք է կփորձեն իրենց հնարավորությունների սահմաններում հակազդեցության մեջ մտնեն այդ երկու խավերի հետ և չթողնեն, որ թունավորվի իրանահայերի և Հայաստանի հարաբերությունները: Վերջինիս հիմնական ուժը՝ իրանահայերիս դրական մոտեցումն է հայրենիքի նկատմամբ և, անկախ քաղաքական շահարկումներից, ուզում է տեսնել իր հայրենիքը բարվոք ու զարգացող, որի հետ վստահաբար կարելի է հույսեր կապել:

Դաշնակցությունը ՀՀ-ում արդեն խոսում է այն հնարավորության մասին, որ մի գուցե նրանք պահանջեն ՀՀ նախագահի հրաժարականը, ուրիշ խոսքով՝ ավելի սուր պայքար պետք է սկսեն ՀՀ իշխանության դեմ, որին հետևելու են նաև իրանի դաշնակցականները: Բայց այս անգամ հետևյալ գործոնների հետևանքով նրանց չի հաջողվի անցյալի նման հակահայաստանյան տրամադրություն ստեղծել իրանահայության մեջ՝ 1- Դաշնակցության մեջ կա երիտասարդ մի խավ, որը ամեն ինչ ուզում է տեսնել թափանցիկ և գերադասում է հայրենիքի շահը նեղ կուսակցական շահերից, 2- Իրանահայության շփումը Հայաստանի հետ բավականին շատ է և նրանք ավելի լավատեսյակ են Հայաստանյան անցուղործից,



Վահիկ Բաղդասարյան

քան անցյալում էր և հեշտ չի լինի նրանց դեպի միջուկային հանրության միջոցով սխալ տեղեկություններ փոխանցել: 3- երկու երկրների՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության բարի դրացիական և ջերմ հարաբերությունները, որոնք օրըստօրե զարգանում են, 4- Ոչ դաշնակցական խավերի արթուն լինելը և նրանց ներկայությունը ազգային ու համայնքային տարբեր կառույցներում:

Հույսով ենք, որ քաղաքական ու հասարակական բոլոր ուժերը ոչ միայն օբյեկտիվորեն հետևեն բոլոր հարցերին այլև կնպաստեն Հայ-Թուրքական հարաբերությունների ճիշտ գործընթացի զարգացմանը և թև ու թիկունք կկանգնեն ՀՀ իշխանությանը, որպեսզի ՀՀ իշխանությունն էլ, իր թիկունքում ունենալով ամբողջ հայության օժանդակությունն ու հովանավորությունը, ավելի զորեղ հանդես գա այդ հարաբերությունների ճշտման գործընթացում: Մի խոսքով՝ բոլորս պետք է գիտակցենք, որ անցել են այն ժամանակները, որ մեր ներ խմբային շահերի կամ մոտեցումների համար ՀՀ իշխանությանը «դավաճանի» կամ «Ղարաբաղը ծախողի» պիտակներ կպցնելով կը կարողանան խաբել ժողովրդին: Ոչ ոք, ոչ մի կուսակցություն, ոչ մի հասարակական կազմակերպություն կամ շրջանակ՝ թե Հայաստանում, թե սփյուռքում ոչ դավաճան է, ոչ էլ պակաս է սրտցավ քան այն ազգայինները, որոնք հնարավոր է թերագնահատեն հենց նույնիսկ կուսակցականներին, հասարակական միավորներին ու հայրենակիցներին:

Դոկտ. Ռուբիկ Սարգսյան

Իրանահայ համայնք

«ՐաՖՖի» համալիրի երեցների բաժնի նախաձեռնությամբ

Վերջերս ՀՍՍ «ՐաՖՖի» համալիրի երեցների բաժանումները իրականացրեց երկու ծրագրեր. ուրբաթ՝ օգոստոսի 14-ին, ամբողջ միութենականների համար կազմակերպել էին մեկ օրյա արշավ դեպի Թեհրանի կից «Սորխե հեսար»-ի անտառային զբոսայգու մոտ «Թորքման Դե» շրջանի այգիներից մեկում:

Օգոստոսի 21-ին նրանք այցելեցին Ֆիրուզբուի շրջանի «Թանգե Վաշի» տեսարժան պատմական վայրը: «Թանգե Վաշի» կամ «Թանգե Սավաշի»-ն գտնվում է Ֆիրուզբու քաղաքից 15 կիլոմետր հարավ արևմուտք և իր հարմար կլիմայով ամառները գրավում է բազմաթիվ այցելուների ուշադրությունը: «Թանգե Վաշի»-ի այցելության ամենահետաքրքիր մասը ջրում քայլելն է, պետք է անցնել երկու սլացիկ ժայռերի արանքով, որոնց բարձրությունը մոտ 100 մետր է: Նրա երկարությունը, մինչև գեղեցիկ ջրվեժին հասնելը, 300 մետր է: Ջրվեժին հասնելու համար պետք է անցնել երկու ջրային նեղուց, առաջինն անցնելուց հետո դուրս ես գալիս շատ գեղեցիկ մի դաշտ և երկու կիլոմետր հողային տարածություն անցնելուց հետո հասնում են երկրորդ կիրճին՝ ջրային նեղուցին: Բոլոր միութենականներին ու իրենց բարեկամներին հաջողվեց անցնել առաջին և երկրորդ կիրճերը ու հասնել ջրվեժին: «Թանգե Վաշի»-ն, բացի իր գեղեցիկ բնությունից, ունի նաև երեք պատմական քանդակներ՝ «Քաթիբներ», որոնք պատրաստվել են Իրանի Ֆատալիզադի հրամանով: Այդ տարածքը օգտագործվել է նաև «Ղաջար» թագավորների համար որպես որսորդավայր: Ժայռի վրա արված երեք քանդակները շուրջ 185 տարվա պատմություն ունեն և ունեն այնպիսի դիրք, որ անձրևից ու ձյունից ապահով են մնում:

Իրանահայ լրատվամիջոցների ներկայացուցիչների հավաք

2009 թվականի սեպտեմբերի 11-ին տեղի ունեցավ իրանահայ մամուլի և հայկական տարբեր կայքերի ներկայացուցիչների հանդիպում: Այս հանդիպման կազմակերպման միտքը առաջացել էր անցյալ տարի համահայկական լրատվամիջոցների հավաքում, որը տեղի ունեցավ Հայաստանում, որտեղ մասնակիցները արտացոլեցին այն միտքը, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր համայնք երբեմն

կազմակերպի տվյալ համայնքի հայ լրատվամիջոցների ներկայացուցչական հանդիպում: Տեղեկացված էին իրանահայ բոլոր լրատվամիջոցների, մամուլի ներկայացուցիչներ, սակայն այս հանդիպմանը մասնակցում էին «Յույս» երկշաբաթաթերթի, «Արաքս» շաբաթաթերթի, «Լույս» ամսագրի, «Իրանահայեր» կայքէջի, «Papierdeliberte», «artinarakelian» և «armenia-iran» կայքէջերի ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին իրանահայ լրատվամիջոցներին վերաբերող տարբեր հարցեր, նշվեց հատկապես մեր համայնքի խնդիրների ոչ թափանցիկ լինելու հիմնահարցը և դրա անհրաժեշտությունը ապագա գործընթացներում: Որոշվեց միասնական մի հայտարարությամբ հանդես գալ և սերտացնել համագործակցությունը միմյանց հետ ու համայնքին իրազեկ պահել եղած լրատվություններից: Որոշվեց հաջորդ հանդիպմանը կրկին հրավիրել այն լրատվամիջոցների ներկայացուցիչներին, որոնք բացակայում էին:

Փերիո Կրթասիրաց Միության ուխտագնացությունը Գորգան եւ Ղորղունի Ս. Աստվածածին մատուռ

Օգոստոսի 20-ին Փ.Կ. Միության վարչությունը ուխտագնացություն էր կազմակերպել դեպի Գորգան քաղաք և Ղորղուն Ս. Աստվածածին մատուռ: Ծրագրին մասնակցում էին շուրջ 40 ուխտավորներ: Նույն օրը տեղի ունեցավ պատարագ, որը առաջնորդում էր ԹՀԹ բարեխնամ առաջնորդ Ս. Սեպուհ Արք. Սարգսյանը: Սրբազան Հայրը օրհնեց և արտահայտվեց վերափոխման տոնի և խաղողօրհնության կապակցությամբ, որից հետո ուխտավորները հաղորդվեցին և ստացան օրհնված խաղող: Սրբազան Հայրը իր գոհունակությունը հայտնեց Փերիո Կրթասիրաց Միությանը նման միջոցառում կազմակերպելու համար:

Գորգանի եկեղեցադպրոցական հոգաբարձությունը ճաշին հյուրընկալեց ուխտավորներին: Ուխտավորների թվում էր նաև հարգարժան մտավորական բանաստեղծ և վաստակավոր ուսուցիչ պրն. Ալմինը, որը իր բանաստեղծություններով ճոխացրեց միության ծրագիրը:

Կազմակերպվեց նաև մտերմիկ զրույց Սրբազան Հոր, Թեմական և Կրոնական Խորհրդների ներկայացուցչների, շրջանից եկած ժողովրդի և ուխտավորների միջև: Տեղի ունեցավ նաև ուրախ ժամանց, որից հետո ուխտավորները վերադարձան Թեհրան մեծ գոհունակությամբ:

Հայաստան

Հայաստանի Հանրապետությունը եւ Թուրքիայի Հանրապետությունը համաձայնել են սկսել ներքին քաղաքական խորհրդակցություններ

ԵՐԵՎԱՆ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Հայաստանի Հանրապետությունը եւ Թուրքիայի Հանրապետությունը համաձայնել են սկսել ներքին քաղաքական խորհրդակցություններ՝ շվեյցարական միջնորդությամբ իրականացվող բանակցությունների ընթացքում նախաստորագրված հետեւյալ երկու արձանագրությունների շուրջ. «Արձանագրություն երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» եւ «Արձանագրություն երկկողմ հարաբերությունների զարգացման մասին»: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ ԱԳ նախնախնի եւ տեղեկատվության վարչությունից, հիշյալ երկու Արձանագրությունները սահմանում են խելամիտ ժամկետում երկկողմ հարաբերությունների կարգավորման շրջանակ: Ներքին քաղաքական խորհրդակցությունները կավարտվեն վեց շաբաթվա ընթացքում, որից հետո երկու Արձանագրությունները կստորագրվեն եւ կներկայացվեն համապատասխան խորհրդարաններին՝ վավերացման համար: Երկու կողմերը կգործադրեն իրենց առավելագույն ջանքերը վավերացման արագ առաջընթացի համար՝ համաձայն իրենց սահմանդրական եւ օրենսդրական գործընթացների: Երկկողմ հարաբերությունների կարգավորումը կնպաստի տարածաշրջանային խաղաղությանն ու կայունությանը: Հայաստանի Հանրապետությունը եւ Թուրքիայի

Հանրապետությունը հանձն են առնում շարունակել համատեղ ջանքերը Ըվեյցարիայի օժանդակությամբ: Ստորել ներկայացնում ենք եւ «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատման մասին» եւ «Հայաստանի Հանրապետության եւ Թուրքիայի Հանրապետության միջեւ երկկողմ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունների տեքստերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը Զգտելով հաստատել բարիդրացիական հարաբերություններ և զարգացնել երկկողմ համագործակցությունը քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում՝ ի շահ իրենց ժողովուրդների՝ համաձայն հարաբերությունների զարգացման մասին նույն օրը ստորագրված Արձանագրության, Վկայակոչելով ՄԱԿ-ի Կանոնադրությամբ, Հելսինկյան Եզրափակիչ ակտով, Նոր Եվրոպայի համար Փարիզյան խարտիայով իրենց ստանձնած պարտավորությունները, Վերահաստատելով հավասարության, ինքնիշխանության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքները հարգելու իրենց երկկողմ և բազմակողմ պարտավորությունները,

Հաշվի առնելով երկու երկրների միջև՝ ամբողջ տարածաշրջանում խաղաղության, անվտանգության և կայունության ամրապնդմանը նպաստող, հավատի և վստահության միջավայր ստեղծելու, ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից զերծ մնալու, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման նթնուղիտ ստեղծելու կարևորությունը,

Վերահաստատելով երկու երկրների միջև գոյություն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով,

Կարևորելով իրենց որոշումը՝ բացելու ընդհանուր սահմանը, Հաստատելով իրենց հանձնառությունը՝ ձեռնպահ մնալ բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն վարելուց, Դատապարտելով ահաբեկչության, բռնության և ծայրահեղականության բոլոր ձևերը՝ անկախ դրանց պատճառներից և խոստանալով ձեռնպահ մնալ նման գործողությունները խրախուսելուց ու հանդուրժելուց և համագործակցել դրանց դեմ պայքարում, Հաստատելով ընդհանուր շահերի, բարի կամքի, փոխըմբռնման, խաղաղության և ներդաշնակության խթանման վրա հիմնված հարաբերությունների նոր ձևեր և ուղիներ մշակելու իրենց պատրաստակամությունը,

Համաձայնեցին հիմնել դիվանագիտական հարաբերություններ սույն Արձանագրության ստորագրման օրվանից՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961թ. կոնվենցիայի համապատասխան, և փոխանակել դիվանագիտական ներկայացուցչություններ:

Սույն արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների զարգացման մասին Արձանագրությունը ուժի մեջ են մտնում միևնույն օրը՝ վավերացման գործիքների փոխանակմանը հաջորդող ամսվա առաջին օրը: Կատարված է , հայերեն, թուրքերեն և անգլերեն հավասարազոր կրկնօրինակներով: Մեկնաբանության տարածայնության դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը.

Դեկավարվելով նույն օրը ստորագրված Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությամբ,

Նկատի ունենալով վստահության և երկկողմ շահերի հարգման վրա հիմնված երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները,

Որոշելով զարգացնել և խորացնել իրենց երկկողմ հարաբերությունները քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտի, մշակույթի, գիտական, տեխնիկական և այլ ոլորտներում՝ հիմնվելով երկու երկրների ընդհանուր շահերի վրա,

Աջակցելով երկու երկրների միջև համագործակցության զարգացմանը միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններում, մասնավորապես ՄԱԿ-ում, ԵՎԿԿ-ում, Եվրոպայի խորհրդում, Եվրատլանտյան գործընկերության խորհրդում և ՄՕՏՀ-ում,

Հաշվի առնելով երկու պետությունների ընդհանուր նպատակը՝ համագործակցելու տարածաշրջանային կայունության և անվտանգության ամրապնդման ուղղությամբ՝ հանուն տարածաշրջանի ժողովրդավարական և տևական զարգացման ապահովման,

Վերահաստատելով իրենց հանձնառությունը տարածաշրջանային և միջազգային վեճերի և հակամարտությունների խաղաղ կարգավորմանը՝ միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների հիման վրա, Վերահաստատելով իրենց պատրաստակամությունը ակտիվորեն սատարելու միջազգային հանրության գործողություններին՝ ընդդեմ տարածաշրջանում և աշխարհում անվտանգության և կայունության դեմ առկա սպառնալիքների, ինչպիսիք են ահաբեկչությունը, անդրազգային կազմակերպված հանցագործությունը, թմրանյութերի և զենքի ապօրինի առք ու վաճառքը,

1. Համաձայնեցին բացել ընդհանուր սահմանը սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում,

2. Համաձայնեցին նաև երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև պարբերաբար անցկացնել քաղաքական խորհրդատվություններ,

իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձևակերպման համար, առավելագույնս օգտագործել երկու երկրների միջև գոյություն ունեցող ճանապարհային, հաղորդակցության, էներգետիկ ենթակառուցվածքներն ու ցանցերը և միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ,

զարգացնել երկկողմ իրավապայմանագրային դաշտը՝ երկու երկրների միջև համագործակցությունը խթանելու նպատակով, համագործակցել գիտության և կրթության ոլորտներում՝ համապատասխան հաստատությունների միջև հարաբերությունների խրախուսման և մասնագետների ու ուսանողների փոխանակումը խթանելու միջոցով, և աշխատանք տանել երկու կողմերի մշակութային ժառանգության պահպանման և համատեղ մշակութային ծրագրեր իրագործելու նպատակով,

համագործակցություն հաստատել հյուպատոսական բնագավառում՝ Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի 1963թ. կոնվենցիայի համաձայն՝ երկու երկրների քաղաքացիներին անհրաժեշտ աջակցություն ապահովելու նպատակով,

ձեռնարկել կոնկրետ միջոցներ երկու երկրների միջև առևտուրը, զբոսաշրջությունը և տնտեսական համագործակցությունը զարգացնելու նպատակով,

երկխոսությունն ծավալել և ամրապնդել համագործակցությունը բնապահպանական հարցերում, 3. Համաձայնեցին ստեղծել միջկառավարական երկկողմ հանձնաժողով, որը կունենա առանձին ենթահանձնաժողովներ՝ սույն Արձանագրության վերը նշված երկրորդ գործառնության պարբերության հանձնառությունների անմիջական իրագործման նպատակով: Միջկառավարական հանձնաժողովի և նրա ենթահանձնաժողովների աշխատանքների մշակման նպատակով, սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից 2 ամիս անց, կստեղծվի աշխատանքային խումբ՝ երկու արտգործնախարարների ղեկավարությամբ: Սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում այդ աշխատանքները կհաստատվեն նախարարական մակարդակով: Միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը կկայանա նշված աշխատանքների ընդունումից անմիջապես հետո: Ենթահանձնաժողովները կսկսեն իրենց աշխատանքը դրանից ոչ ուշ քան մեկ ամիս անց և կգործեն շարունակաբար մինչև իրենց մանդատի ավարտը: Ըստ անհրաժեշտության, միջազգային փորձագետները կմասնակցեն ենթահանձնաժողովներին աշխատանքներին:

Սույն Արձանագրության իրագործման համար երկուստեք համաձայնեցված ժամանակացույցը և տարրերը ներկայացված են հավելվածում, որը հանդիսանում է սույն Արձանագրության անբաժան մաս: Սույն Արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև Դիվանագիտական Հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությունը ուժի մեջ են մտնում մինևսույն օրը՝ վավերացման գործիքների փոխանակմանը հաջորդող ամսվա առաջին օրը:

Ստորագրված է , հայերեն, թուրքերեն և անգլերեն հավասարազոր կրկնօրինակներով: Մեկնաբանության տարածանության դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հավելված: Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման Արձանագրության իրագործման ժամանակացույց և տարրեր Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև երկկողմ հարաբերությունների զարգացման մասին Արձանագրության իրագործման ժամանակացույց և տարրեր

Ձեռնարկվող քայլեր.

1. ընդհանուր սահմանի բացում

Ժամկետ՝

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում

2. երկու արտգործնախարարների ղեկավարությամբ աշխատանքային խմբի ստեղծում՝ միջկառավարական հանձնաժողովի և նրա ենթահանձնաժողովների աշխատանքների մշակման նպատակով

Ժամկետ՝

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման Արձանագրության ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից երկու ամիս անց

3. միջկառավարական հանձնաժողովի և իր ենթահանձնաժողովների աշխատանքների հաստատում նախարարների մակարդակով

Ժամկետ՝

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման Արձանագրության ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից երեք ամսվա ընթացքում

4. միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի գումարում

Ժամկետ՝

միջկառավարական հանձնաժողովի և նրա ենթահանձնաժողովների աշխատանքների ընդունումից անմիջապես հետո՝ նախարարական մակարդակով 5. ստորև նշված ենթահանձնաժողովների աշխատանքների մեկնարկում.

- քաղաքական հարցերով ենթահանձնաժողով,
- ճանապարհային, հաղորդակցության, էներգետիկ և ենթակառուցվածքների հարցերով ենթահանձնաժողով,
- իրավական հարցերով ենթահանձնաժողով,
- գիտության և կրթության հարցերով ենթահանձնաժողով,
- առևտրի, զբոսաշրջության և տնտեսական համագործակցության հարցերով ենթահանձնաժողով,
- բնապահպանական հարցերով ենթահանձնաժողով:
- պատմական հարթությամբ զբաղվող ենթահանձնաժողով / երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված երկխոսության իրականացում, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների անկողմնակալ գիտական ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձևակերպման համար՝ հայ, թուրք, ինչպես նաև շվեյցարացի և այլ միջազգային փորձագետների մասնակցությամբ,

Ժամկետ՝

միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստից ոչ ուշ քան մեկ ամիս անց:

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՄԻ ԺԱՆՁՈՒՄԸ ՄԵՆ Է, ՈՐԸ ՉՏԵՎՈՒՄ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՐԻ ՈՒՐԵՂԻ ՄԵՋ»

Ժողովրդավարության եւ համագործակցության Նյու Յորքի ինստիտուտի տնօրեն Անդրանիկ Սիիրանյանը դրական է գնահատում նախաստորագրված երկու փաստաթղթերը: Իհարկե, դրանք անթերի չեն, որոշ կետերի նկատմամբ կան դիտողություններ, բայց փորձագետը խորհուրդ է տալիս չմոռանալ, թե որքան դժվար է ստորագրել փաստաթուղթ, որտեղ կողմերը գոհ լինեն: «Ցեղասպանության եւ հայ թուրքական հարաբերությունների հարցը մի ժանգոտած մեխ է, որը գտնվում է հայ ժողովրդի ուղեղի մեջ: Այդ ժանգոտած մեխը պետք է դուրս բերվի, ազգը պետք է դուրս գա մշտական գոհի հոգեբանական վիճակից եւ կարողանա ինքնավստահ, ինքնաբավ հոգեբանական զգացողություն ունենալ եւ ավելի շատ նայել դեպի ապագան, քան թե անընդհատ կախված լինել անցյալից: Նաեւ որպեսզի կարողանա առաջ շարժվել՝ առանց ուղեքից կախված այդ ծանր բեռների», նկատում է Սիիրանյանը ՄԱՍ-ում տեղի ունեցած հանդիպման ժամանակ:



Քաղաքագետը ողջունելի ձեռքբերում է համարում, որ Թուրքիայի առաջարկած երեք հայտնի նախապայմանները արձանագրությունում տեղ չեն գտել. «Եթե ոչ 100%-ով, բայց զգալի չափով հայկական կողմը կարողացավ ստանալ այն, ինչը այսօրվա պայմաններում Հայաստանի այս ռեսուրսներով հնարավոր էր ստանալ, երբ դու գործ ունես մի հզոր պետության հետ, որն այսօր աշխարհի մեծագույն տնտեսություններից մեկն է, աշխարհի ամենամեծ բանկերից, ամենամեծ տարածքներից, ամենազղեցիկ գործող պետությունները մեկն է»: Նա հավելեց, որ առանց ԱՄՆ-ի ակտիվ մասնակցության եւ ՌԴ ակնհայտ պաշտպանության դժվար թե հայկական կողմը կարողանար հասնել արդյունքի:

«Կանխատեսում եմ, որ Թուրքիայում եւ Հայաստանում կլինեն գործող ուժեր, քաղաքական կուսակցություններ, որոնք դեմ կլինեն արձանագրությունների ստորագրմանը: Բայց վստահ եմ, որ մեծամասնությունը թե՛ Հայաստանում, թե՛ Թուրքիայում կկարողանա հասկանալ, որ այսօրվա իրավիճակում հարաբերությունների նորմալացումն ունի

ստրատեգիական բնույթ: Հարցի ծախսողման հետևանքները կարող են ավելի ծանր լինել, քան հարցի լուծումը», ասաց Միհրանյանը:

Քաղաքագետ, որ աշխատել է ունի անձնական մտերմիկ հարաբերություններ ՀՀ երեք նախագահների հետ, Թուրքիայի հետ կապված որոշ ժառանգակախոսություն է տեսնում Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Սերժ Սարգսյանի վարած արտաքին քաղաքականությունում: «Եվ Լեւոն Տեր-Պետրոսյանը, եւ Վազգեն Սանուկյանը, երբ եկան իշխանության, ցանկություն ունեին անմիջապես բարելավելու հարաբերությունները Թուրքիայի հետ առանց նախապայմանների: Ցավոք, թուրքական կողմը չգնաց դրան: Այլապես այս փաստաթուղթը կարող էր ստորագրվել այն ժամանակ: Եվ հիմա, եթե ոչ բացահայտ, բայց Լեւոն Տեր-Պետրոսյանի համար այս փաստաթղթերը պետք է լինեն ընդունելի: Լեւոն Տեր-Պետրոսյանը շատ ավելի առաջ գնաց դարաբաղյան հարցում, որովհետեւ այն ժամանակվա իրականությունում պետք է Ղարաբաղը իրավաբանական իմաստով ճանաչվեր որպես Ադրբեջանի մաս, «դե ֆակտո»՝ անկախ, բայց «դե յուրե»՝ ադրբեջանական իրավասության տակ»:

Միհրանյանը նկատում է, որ այսօր հարցն այդպես դրված չէ, եւ եթե նույնիսկ մտավախություններ կան, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կարող է ԼՂ հակամարտության հարցում զիջումների հանգեցնել, ապա այժմ հարցն այնպես է դրված, որ զիջումներ հնարավոր չեն: «Այն ցանկությունը, որ հայկական կողմը հետ տա «գրավված» տարածքների մի մասը կամ 5 շրջանը, ընդունելի չէ ոչ մի իմաստով, որովհետեւ համապատասխան երաշխիքներ չկան, որ դրանից հետո կկազմակերպվի հանրաքվե, եւ դրա արդյունքները կընդունվեն միջազգային հանրության եւ Բաքվի կողմից»: Միհրանյանը հավելեց, որ Սերժ Սարգսյանը դիմում է ռիսկի, բայց ի տարբերություն Լեւոն Տեր-Պետրոսյանի, այդ ռիսկն ավելի լավ է հաշվարկված: «Կասկած չկա, որ Սերժ Սարգսյանը շատ ավելի ճկուն է, իսկ Էդվարդ Նալբանդյանը՝ շատ ավելի արոճեցիկ, քան Վարդան Օսկանյանը: Իհարկե, Էդվարդ Նալբանդյանի դպրոցն ու դիվանագիտական կուլտուրան տասնյակ անգամ ավելի բարձր են, եւ, վերջիվերջո, տարբեր են նրանց «բեքորաունդերը»: Սեկը գերիզուր պետության հայտնի դիվանագետ է եղել եւ հասել է մեծ արդյունքների, մյուսը, չեն ուզում վիրավորական լինի, բայց ուղղակի հայկական ինչ-որ սփյուռքային շրջաններում մեծացած եւ նոր Հայաստանում աճած, զարգացած եւ հաճելի մի մարդ, բայց չունենալով այն պետականության եւ պրոֆեսիոնալիզմի հասկացողությունն ու իմաստը, որը բնորոշ է այն մարդուն, ով եղել է դիվանագետ գերիզուր պետության համար»:

Անդրադառնալով Ռոբերտ Քոչարյանի վարած արտաքին քաղաքականությանը, Միհրանյանը դժվարացրեց կարծիք հայտել՝ հավելելով, որ ավելի անհեթեթ հասկացություն, քան կոմպլեքսներտար քաղաքականություն է, երեւի դիվանագիտության պատմության մեջ չի եղել: «Ռոբերտ Քոչարյանի նախագահությունը կարող էր փայլուն ավարտվել, եթե նա Քի Վեսթում ԼՂ խնդրի կարգավորման առնչվող փաստաթուղթը ստորագրեր: Սակայն դրանից հետո հայկական դիվանագիտությունը մոտ 7 տարի իներցիոն եւ ոչ թե նախաձեռնողական բնույթ է կրել»:

ՎԱԶԳԵՆ ՍԱՆՈՒԿՅԱՆ. «ԻՆՉՈՒՄ ԴԵՏԵ Է ԸՆՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՐԴՆ ԴԵՄ ԼԻՆԻ ԸԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎԱՄԱՆԸ»

Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Սանուկյանը գրուցեց հայ-թուրքական երկկողմ եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ իրապարակված ա ռ ծ ա ն ա գ ռ ու թ յ ու ն ն եր ի շ ու ռ ջը, որոնք պրն Սանուկյանը ողջունեց՝ ասելով, որ փաստաթղթերով շատ վճռական եւ կարեւոր քայլ է արվել մեր



արտաքին քաղաքականության մեջ: Ողջ հարցազրույցը խոստանալով ներկայացնել վաղը, այժմ ընթերցողներին մատուցեմք այն հատվածը, երբ խոսվում է արձանագրությունը քննադատողների մասին:

Վ. Ս. - «Դուք ինձ բացատրեք՝ բացի որոշ ուժերի ցանկությունից, որ անեն զնով ուզում են իշխանություն գցել, ինչո՞ւ պետք է Հայաստանի ժողովուրդը դեմ լինի Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը, ճանապարհների բացմանը: Ի՞նչը պետք է առաջացնի այդպիսի դժգոհություն:

- Հիշողությունը, Ձեր ասած երազի կորուստը, Ցեղասպանության, Հայ դատի խնդիրների ապագան...

Վ. Ս.- Այս քայլից հետո, եւ կարծում եմ, նույնիսկ Ցեղասպանության ճանաչման խնդիրն ավելի հեշտ կլինի: Ցեղասպանության ճանաչման վերջնականացումն ի՞նչ է՝ որ մյուս երկրների միջոցով ճնշում գործադրվի եւ վերջիվերջո Թուրքիան ընդունի այդ փաստը: Այս փաստաթղթի դեպքում, երբ դու ունես դիվանագիտական հարաբերություններ, երբ սահմանը հաստատված է, շատ ավելի հեշտ է Թուրքիայի համար նաեւ հաջորդ քայլն անել՝ ընդունել Ցեղասպանությունը: Այսինքն՝ այս քայլը Թուրքիայի ձեռքերն ազատում է Ղարաբաղի հարցից, որը մեզ համար ձեռնառու է, եւ հեշտացնում է Թուրքիայի կողմից Ցեղասպանության ընդունումը: Կան քաղաքական գործիչներ, որոնք առաջ ասում էին՝ Ղարաբաղը տանք, որ հանգիստ ապրենք, հիմա ասում են՝ Ղարաբաղը տալիս են, առաջ ասում էին՝ Թուրքիայի հետ նորմալ հարաբերություններ, հիմա խոսում են մեր ազգային երազանքների մասին. այդպիսի քաղաքական ուժերն ինձ համար կշիռ, ազդեցություն չունեն, իրենք կարող են 1-2 շաբաթ ժողովրդին խաբել, բայց չեն կարող ժողովրդին ամիսներով խաբել:

«ԶԵՆԵ ԿԱՌՉԻ ՈՒԲԱՍՏԱՆԻՑ, ԿՅՈՒԼԱՆԱ ԿԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԱՍՏԱՆԻՑ, ԶԵՆԵ ՍՄԱՍԻ ԹԵՐՐԱՆ-ՎԱՃԻՆՔՏՈՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱՐՎԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՄԱՆԸ»

Թուրքագետ Հակոբ Չաքրյանը վստահ է, որ Հայաստանն ու Թուրքիան նահանջելու հնարավորություն չեն ունեցել եւ կնքել են արձանագրությունը, քանի որ նախաձեռնողները միջազգային ուժերն էին՝ ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի գլխավորությամբ: Դա կնպաստի ոչ այնքան երկու երկրների հարաբերությունների կարգավորմանը, որքան Հարավային Կովկասում ծավալվող ռուս-ամերիկյան պայքարը կծառայեցնի ի նպաստ Վաշինգտոնի շահի: Չաքրյանը նկատում է, որ արձանագրությունները միանշանակ չեն գնահատվել Թուրքիայում եւ Ադրբեջանում: Մի շարք կուսակցություններ ու քաղաքական ուժեր Երդողանին անվանել են դավաճան: «Թուրքական իշխանություններն էլ են դաժան հարձակման ենթարկվում իրենց հասարակությունից: Երդողանին դավաճան են անվանում, կոպիտ վիրավորանքներ հասցնում: Նրանց վիճակը նախանձելի չէ», նկատում է նա:

Առավելապես թուրքագետը ադրբեջանական կայքերից մեկում էլ հողված է կարդացել՝ «Դավաճանություն. Աշխարհը գոհ է, Ադրբեջանը՝ մտահոգ» վերնագրով, ինչից եզրակացրել է, որ ադրբեջանական քաղաքական վերնախավը մտահոգված, զայրացած ու հիասթափված է: Սակայն Չաքրյանը փաստում է, որ արձանագրությունների հրապարակումը դեռ դիվանագիտական հարաբերությունների հաստատում չի նշանակում: Դա պետք է ցույց տա ժամանակը: «Եթե Սերժ Սարգսյանը գնա Թուրքիա, որոշ բաներ ավելի կհստակեցվեն եւ կկարողանանք կռահել, թե հետագա քայլերն ինչ են լինելու: Եթե անգամ ստորագրվեն այդ արձանագրությունները, դեռ պետք է դրվեն երկու պետությունների խորհրդարանների քննարկմանը: Թուրքիայի Սեջլիսի երկու կուսակցությունները դեմ են փաստաթղթի ստորագրմանը, Երդողանի կուսակցության շարքերում էլ դեմ արտահայտվողներ կլինեն: Հայաստանում



հնարավոր է, որ խնդիրն ավելի հեշտ լուծում ստանա, բայց այստեղ էլ խնդիրներ կան: Հարցն անընդհատ կապում են Հայոց ցեղասպանության կամ Կարսի պայմանագրի հետ: Առհասարակ հայ-թուրքական հարաբերությունները չափից դուրս են վերաբարձվում, չի կարելի այդքան մեծ կարելություն տալ այդ հարաբերություններին», հավելում է «Ազգ» օրաթերթի քաղաքական մեկնաբանը:

Հակոբ Չաքրյանը չի հերքում, որ այդ հարաբերությունների հաստատումը շատ կարելու է նաև Հայաստանի համար, այն առումով, որ ստիպված չենք լինի կառչել Ռուսաստանից: Կթուլանա կախվածությունը Վրաստանից եւ անընդհատ չենք սպասի, թե երբ կթուլանա թեհրան-Վաշինգտոն հարաբերությունների լարվածությունը, որպեսզի կարողանանք Իրանի հետ անկաշկանդ համագործակցել: Թուրքացեալը ապավինում է ժամանակին՝ հավելելով, որ միայն պազազտը ցույց կտա՝ կլինե՞ն երկու պետությունների միջեւ հարաբերություններ: Առայժմ հայտնի է, որ արձանագրությունը կժառայի, որպեսզի Սերժ Սարգսյանը մեկնի Թուրքիա:

«Ամեն ինչ նոր է սկսվում, սակայն մի բան ակնհայտ է. այս արձանագրությունների շնորհիվ երկու պետություններն էլ կծերբազատվեն միջազգային ուժերի ճնշումներից»:

Անդրադառնալով Կարսի պայմանագրին, Չաքրյանը նկատեց, որ այն երկկողմ պայմանագիր չէ՝ միայն Հայաստանի եւ քեմալական Թուրքիայի միջեւ, պայմանագրի տակ իրենց ստորագրությունն են դրել նաև Ռուսաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը: Հետեւաբար վերահաստատման համար անհրաժեշտ է վերոնշյալ երկրների համաձայնությունը նույնպես: Անդրադառնալով հանձնաժողովների ստեղծմանը, Հակոբ Չաքրյանը որեւէ վտանգ կամ սպառնալիք չի տեսնում: Նրա խոսքերով՝ յուրաքանչյուր հարց կարելի է քննարկել, «նայած, թե դրանք ինչպես են քննարկվում»:

ՀԱՍՏԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ-Ազգ

ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման շուրջը Հայաստանի, Թուրքիայի եւ Շվեյցարիայի արտգործնախարարությունների համատեղ հրապարակած փաստաթղթերը քննարկվել են կուսակցության Հանրապետական վարչության հերթական նիստում:



Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը ողջունում է Հայաստանի իշխանությունների ջանքերն ուղղված Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավմանը: Համատեղ հայտարարության մեջ ներկայացված գործընթացի իրականացումը, Հայաստանին դուրս բերելով շրջապատմից, կնպաստի տնտեսական զարգացմանը եւ տարածաշրջանում Հայաստանի քաղաքական դերի բարձրացմանը, որն իր հերթին, Հայ դատի հետապնդման իրատեսական ճանապարհ կբացի:

Միաժամանակ կուսակցությունն իր մտահոգությունն է հայտնում «Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրության» մեջ տեղ գտած մի շարք դրույթների կապակցությամբ, մասնավորապես «Վերահաստատելով երկու երկրների միջեւ գոյություն ունեցող ընդհանուր սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով» կետը իր ձեւի մեջ Կարսի պայմանագրով ստեղծված սահմանագծումը մկիականացնելու փորձ է, իսկ հաջորդ՝ «Կարելություն իրենց որոշումը՝ բացելու ընդհանուր սահմանը» նախադասությունը խեղաթյուրում է ողջ իրականությունը սահմանի միակողմանի փակման եւ Հայաստանը շրջափակելու փաստի վերաբերյալ:

Բացի դրանից, զարմանք է հարուցում այն փաստը, որ երկկողմ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու գործընթացը խորհրդարանների վավերացման ուղիով է անցնելու: Սովորաբար, համաշխարհային պրակտիկայում,

դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կառավարությունների գործառույթի մասն է, եւ դրա վավերացումը կրում է սոսկ ձեւական, ընթացակարգային բնույթ: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների՝ դիվանագիտական կապերի հաստատման դեպքում, նման պրակտիկայի կիրառումը հուշում է, որ Թուրքիայի խորհրդարանը կփորձի ձգձգել վավերացման գործընթացը, ինչը պաշտոնական Անկարային նոր չարաշահումների եւ խարդավանքների հնարավորություն կտա:

Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը հայրենի իշխանությունների ուշադրությունն է հրավիրում նման վտանգների վրա եւ զգուշության ու շրջահայացության կոչ անում:

Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը ակնդետ հետեւում է այս գործընթացին եւ շարունակաբար հանդես կգա մեկնաբանություններով:

ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՅՊ ԸՆԹԱԸԱՎԱՔ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Խեչոյանների 2-ի երեկոյան Երեւանի Շառլ Ազնավուրի հրապարակում տեղի ունեցավ ՀՅՊ Գերագույն մարմնի կազմակերպած հանրահավաքը՝ Հայաստան-Թուրքիա բանակցությունների բովանդակության դեմ: Հռետորներից Արմեն Ռուստամյանը չբացառեց, որ բանակցությունների այս բովանդակությամբ շարունակման դեպքում չի բացառվում, որ իր կուսակցությունը պահանջի նաև ՀՀ նախագահի հրաժարականը:

ՌԱԿ ՄՆ-Ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՎ ԿԱՆԱԿԱՅԻ ԿԱՐԳՈՒԹՅԱՆ ԸՆԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին

Ռամկավար ազատական կուսակցության Մ. Նահանգների արեւելյան շրջանի եւ Կանադայի վարչությունը ողջունում է Շվեյցարիայի կառավարության միջնորդությամբ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու երկու երկրների արտգործնախարարների հայտարարությունը:



Հայաստանի արտաքին գործերի նախարարության հրապարակած երկու արձանագրությունները բացահայտում են առաջիկա մի քանի ամիսների ընթացքում երկու հանրապետությունների միջեւ իրականացվելիք հարաբերությունների հաստատման եւ զարգացման գործընթացի բոլոր մանրամասները, որոնք իրենց հերթին առաջնորդելու են հյուպատոսարանների հաստատմանը, սահմանի բացմանը եւ երկու երկրների միջեւ առեւտրի խթանմանը: Համակողմանի արձանագրությունները նպատակաուղղված են գործնական հարաբերություններ հաստատելուն քաղաքական, տնտեսական, տրանսպորտի, էներգետիկ, մշակույթի, գիտական եւ այլ ոլորտներում հիմնված եվրոպական եւ միջազգային տարբեր պայմանագրերի վրա: Միջկառավարական հանձնաժողովները եւ ենթահանձնաժողովները հետեւելու են զարգացմանը այդ հարաբերությունների, որոնց թվում են նաև «Երկու ժողովուրդների միջեւ փոխվստահության վերականգնումը, ...գոյություն ունեցող խնդիրների հստակեցումը եւ առաջարկների ձեւակերպումը»:

Արձանագրում ենք, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը BBC-ի թղթակցի հետ զրուցելիս վերահաստատել է այն միտքը, որ Հայաստանը հաստատական է մնում առանց նախապայմանների հարաբերությունները զարգացնելու իր սկզբունքին: Այն հարցին, թե պատրաստ է արդյոք զիջումներ կատարել 1915-ի իրադարձությունների շուրջը, Սարգսյանը պատասխանել է. «Մենք ասում ենք, որ, այո, եղել է ցեղասպանություն, եւ անկախ նրանից՝ կձանաչի՝ Թուրքիան, թե՞ ոչ, սա փաստ է, որն ընդունել են աշխարհում

ցեղասպանությունների խնդիրներով զբաղվող բոլոր մասնագետները... սակայն այս պարագայում դա չենք համարում որպես նախապայման թուրքերի հետ հարաբերությունների հաստատման համար»:

Եթե թուրքիան, օրվա վերջում, դարձյալ հետ չկանգնի այս գործընթացից, հայկական կառավարության նախաձեռնած ֆուտբոլային դիվանագիտությունը քաղաքական հաղթանակ է նշանակելու Հայաստանի համար, եւ թուրքիան ի վերջո գիտակցելու է, որ քաղաքակիրթ աշխարհում բարիդրացիական հարաբերությունները շահավետ են երկու երկրների համար:

ՌԱ կուսակցության Մ. Նահանգների արեւելյան շրջանի եւ Կանադայի վարչությունը ամբողջապես իր զորակցությունն է արտահայտում թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու գործընթացն սկսելու հայկական կառավարության քաղաքականությունը եւ հաջողություն է ցանկանում երկու երկրների համաձայնեցված արձանագրությունների իրականացման գործին:

Ռամկավար ազատական կուսակցությունը շարունակելու է հետամուտ լինել թուրքիայի գործադրած Հայոց ցեղասպանության ճանաչմանը եւ համագործակցելու է սփյուռքում եւ Հայաստանում գործող հայկական կազմակերպությունների հետ վերականգնելու հայ ժողովրդի իրավունքները:

ՌԱԿ Մ. Նահանգների արեւելյան շրջանի եւ Կանադայի վարչություն, 1 սեպտեմբերի, 2009 թ

Մոսկվան ողջունում է դիվանագիտական հարաբերությունների հաստատելու գործընթաց սկսելու Հայաստանի եւ Թուրքիայի պատրաստակամությունը

ՄՈՍԿՎԱ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մոսկվայում ողջունում են դիվանագիտական հարաբերություններ հաստատելու գործընթաց սկսելու Հայաստանի եւ Թուրքիայի պատրաստակամությունը:

«Ռուսաստանի արտգործնախարարությունում դրականորեն են ընդունել «Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրության» եւ «Երկկողմ հարաբերությունները զարգացնելու մասին արձանագրության» ստորագրման նպատակով ներքին համաձայնեցումների գործընթաց սկսելու Հայաստանի եւ Թուրքիայի պատրաստակամության լուրը», - ասված է ՌԴ-ի ԱԳ նախարարության մեկնաբանության մեջ, որի տեքստը զետեղված է գերատեսչության կայքում:

«Հայաստանը եւ Թուրքիան մեզ բարեկամ երկրներ են: Նրանց փոխհարաբերությունների նորմալացման ուղղությամբ տեղաշարժերն ընկալում ենք որպես օրինաչափ եւ վաղուց սպասված գործընթաց: Ուրախ կլինենք, եթե խորհրդակցությունները, որոնք այդ երկրների զուտ ներքին գործն են, ավարտվեն էական համաձայնությունների ձեռքբերմամբ», - նշվում է Ռուսաստանի արտգործնախարարության մեկնաբանության մեջ:

Իտալիան ողջունում է Հայաստանի իշխանությունների վարքագիծն ու պատրաստակամությունը՝ ապահովել ԼՂ հակամարտության խաղաղ կարգավորում

ԵՐԵՎԱՆ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իտալիան ողջունում է Հայաստանի իշխանությունների վարքագիծն ու պատրաստակամությունը՝ ապահովել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորում: Նման դիրքորոշում արտահայտեց ԳԳ-ում Իտալիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Բրունո Սկապինին «Արմենպրես»-ին տված հարցազրույցում՝ ընդգծելով, որ Իտալիան շատ լավ է վերաբերում Հայաստանի հանձնառությանը՝ կարգավորել այս խնդիրը խաղաղ, բանակցային ճանապարհով: «Այս հակամարտության կարգավորումը, ինչպես նաեւ Թուրքիայի կողմից Հայաստանի սահմանների բացումը Հայաստանի համար լավ հնարավորություն կբացի տնտեսական զարգացման տեսանկյունից: Ես հույս ունեմ, որ մոտ ապագայում այս երկու խնդիրները կգտնեն իրենց

լուծումները եւ Հայաստանը տնտեսական տեսանկյունից մեծ առավելություն ձեռք կբերի», - ասաց դեսպանը: Ըստ նրա՝ Իտալիան առհասարակ աջակցում է հակամարտությունների եւ ճգնաժամերի խաղաղ լուծմանը եւ միջազգային ու բազմակողմ կառույցներում՝ մասնավորապես ԵԱԿ Մինսկի խմբի շրջանակներում, սատարում է Հայաստանի ջանքերին՝ հասնելու խաղաղ կարգավորման: Իտալիան հետաքրքրված է այդ ուղղությամբ որդեգրված քաղաքական կուրսով եւ ողջունում է ցանկացած նախաձեռնություն, որը կբերի խնդրի իրական կարգավորման:

Իսպիեր Սոլանան ողջունել է Հայաստանի եւ Թուրքիայի միջև ձեռք բերված համաձայնությունը

ԵՐԵՎԱՆ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եվրոպական միության ընդհանուր արտաքին եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Իսպիեր Սոլանան ողջունել է Հայաստանի եւ Թուրքիայի միջև երեկ ձեռք բերված համաձայնությունը՝ սկսելու ներքին քաղաքական խորհրդակցություններ այն արձանագրությունների վերաբերյալ, որոնք կազմում են դիվանագիտական հարաբերությունների հաստատման շրջանակը: «Սա էական քայլ է երկկողմ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ, որը մեծապես կնպաստի Եվրոպայի այդ կարեւոր տարածաշրջանում խաղաղության, անվտանգության եւ կայունության հաստատմանը: Գովեստի է արժանի երկու կողմերի քաջությունն ու հեռատեսությունը առաջնորդվելու այս պատմական գործընթացով: Հուսով եմ, որ այս երկու արձանագրությունները կստորագրվեն, կվավերացվեն եւ կիրականան առաջիկայում», - նշել է Ի. Սոլանան՝ նաեւ շնորհավորելով Շվեյցարիային՝ միջնորդական ջանքերի կապակցությամբ եւ կարգավորման գործընթացին աջակցելու ու օժանդակելու պատրաստակամության համար:

Ֆրանսիան ողջունում է Հայաստանի եւ Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլերը

ՓԱՐԻԶ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիան ողջունում է Հայաստանի եւ Թուրքիայի իշխանություններին եւ խրախուսում նրանց կրկնապատկել ջանքերը՝ արագորեն համաձայնագիր ստորագրելու համար: Այս մասին ասված է Հայաստանի եւ Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման եւ սահմանի բացման շուրջ բանակցությունների անհապաղ վերսկսման մասին Ֆրանսիայի հայտարարությունում, որը տեղադրված է Ֆրանսիայի նախագահի պաշտոնական կայքում:

«Հանրապետության նախագահը գոհունակությամբ եւ հույսով ծանոթացավ Հայաստանի եւ Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման եւ երկու երկրների միջև սահմանի բացման մասին բանակցությունների անհապաղ վերսկսման մասին այսօր արված հայտարարությանը: Հանրապետության նախագահը համարում է, որ հայ - թուրքական հարաբերությունների կարգավորումը կունենա տարածաշրջանային կայունությանը նպաստող պատմական նշանակություն», - ասված է հայտարարությունում:

ԱՄՆ-ի պետդեսպարտամենտը ողջունել է Թուրքիայի եւ Հայաստանի մերձեցումը

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի պետդեսպարտամենտը հայտարարել է, որ Վաշինգտոնը ողջունում է Թուրքիայի եւ Հայաստանի մերձեցումը: «Միացյալ Նահանգները ջերմորեն ողջունում է Թուրքիայի եւ Հայաստանի համատեղ հայտարարությունը, որը պատրաստվել է Շվեյցարիայի միջնորդությամբ, եւ երկկողմ հարաբերությունների նորմալացման հետագա քայլեր է նախատեսում: ԱՄՆ-ի դիրքորոշումն այն է, որ երկու երկրների հարաբերությունները պետք է կարգավորվեն առանց որեւիցե նախապայմանի եւ խելամիտ ժամկետում: Մենք կոչ ենք անում Հայաստանին եւ Թուրքիային՝ արագացնել աշխատանքն այդ

ուղղությամբ եւ հիմնվել պայմանավորվածություններում առկա սկզբունքների վրա»,-ասված է պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Յան Քելիի հայտարարության մեջ, որը տարածվել է երկուշաբթի երեկոյան: Պետդեպարտամենտը նաեւ հայտարարել է, որ ԱՄՆ-ը նախկինի պես պատրաստ է երկու երկրների կառավարությունների հետ սերտորեն համագործակցել հակամարտության լուծման գործում:

Սեկնարկել է «Արի տուն» ծրագրի երրորդ փուլը

ԵՐԵՎԱՆ, 18 ՕԳՈՍՏՈՍԻ, ԱՐՄԵՆԴՐԵՄ: Այսօր մեկնարկել է ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնած «Արի տուն» ծրագրի 3-րդ փուլը, որի շուրջ 60 մասնակիցներ Հայաստան են ժամանել Իրանից, Վրաստանից, Ռուսաստանից, Գերմանիայից, ԱՄՆ-ից եւ Ֆրանսիայից: Այսօր նրանք այցելել են Էջմիածին եւ Սարդարապատ:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ սփյուռքի նախարարության մամուլի եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, երեկոյան ՀՀ սփյուռքի նախարարությունում ծրագրի մասնակիցներին եւ հյուրընկալող ընտանիքների անդամներին ընդունել են փոխնախարար Ստեփան Պետրոսյանը եւ աշխատակազմի ղեկավար Արտակ Ջաքարյանը:

Ծրագրի պատասխանատու, համահայկական ծրագրերի վարչության պետ Ժենյա Ազիզյանը նրանց ծանոթացրել է մինչեւ օգոստոսի 31-ը տեւող միջոցառումների մանրամասներին:

Հանդիպման ընթացքում բաժանվել են նաեւ «Արի տուն» ծրագրի տարբերանշանով պայուսակներ, վերնաշապիկներ եւ գլխարկներ:

Ս. Սարգսյան. «Այլեւս կայացած, ամրացած ու առնականացած հայոց պետությունն իրողություն է»

ԵՐԵՎԱՆ, 21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆԴՐԵՄ: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորական խոսք է հղել Անկախության տոնի առթիվ: Ինչպես «Արմենպրես»-ին հայտնեցին ՀՀ նախագահի մամուլ գրասենյակից, նախագահի խոսքում ասված է.

«Վեհափառ Տեր, Տիկնայք եւ պարոնայք, Սիրելի հայրենակիցներ, Սրտանց շնորհավորում եմ ձեզ Հայաստանի անկախության 18-րդ տարեդարձի կապակցությամբ:

Սա տոն է, որի փափագն ու զգացողությունը իրենց հոգում կրել են հայ ժողովրդի բոլոր սերունդները: Ես ընդգծում եմ՝ բոլոր սերունդներն՝ առանց բացառության...»:

ԼՂԿ-ում տոնվեց անկախության 18-րդ տարեդարձը

ՍՏԵՓԱՆԱՎԵՐՏ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆԴՐԵՄ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության 18-րդ տարեդարձի միջոցառումներն այսօր մեկնարկեցին Ստեփանակերտի փողոցներում զինվորական հաղթական քայլերով, արցախյան ազատամարտում զոհ գնացած եւ կերտված անկախության գործում իրենց ներդրումն ունեցած անձանց հիշատակին հարգանքի տուրքով:

ՀՀ եւ ԼՂՀ նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Բակո Սահակյանի գլխավորությամբ Ստեփանակերտի՝ Հայրենական պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին եւ արցախյան ազատամարտի զոհերի եղբայրական գերեզմաններին ծաղկեպսակներ եւ ծաղիկներ դրեցին երկու պետությունների նախկին նախագահներ Ռոբերտ Քոչարյանն ու Արկադի Ղուկասյանը, օրենսդիր եւ գործադիր մարմինների ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ, մտավորականներ, սփյուռքահայ հյուրեր: Նրանք ծաղիկներ դրեցին նաեւ ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Սկրտչյանի գերեզմանին:

ՍՏԵՓԱՆԱՎԵՐՏՈՒ ՕՂԱՆԱՎԱԿԱՅԱՆ Ե ԿԱՌԻՑՎՈՒՄ

Արցախում քաղաքացիայի հեռանկարների մասին վաղուց էին խոսում: Վերջերս այդ խոսակցությունները դարձան

իրատեսական, երբ ԼՂՀ ԱԺ-ին ներկայացվեց ԼՂՀ քաղաքացիայի մասին օրինագիծ, որին հաջորդեցին Ստեփանակերտում մեկնարկած օդանավակայանի շինարարական աշխատանքները:

«ԱրմԱր»-ի փոխանցմամբ՝ Երեւանում ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանն անցկացրել է խորհրդակցություն, որտեղ հստակեցվել է, որ Երեւան-Ստեփանակերտ օդային կապը պետք է ապահովել ինքնաթիռներով: Նախագահը ցանկություն է հայտնել, որ կառուցվելիք օդանավակայանը դառնա Արցախի լավագույն այցեքարտը: «Արմավիա» ընկերության սեփականատեր Միխայիլ Բաղդասարովն էլ տեղեկացրել է, որ ինքնաթիռն արդեն ձեռք է բերվել. Երեւան-Ստեփանակերտ չվերթերը կսկսվեն օդանավակայանի պատրաստ լինելու պես:

Իրան

Իրանում Հայաստանի դեսպան Գրիգոր Առաքելյանն իր հավատարմագրերն է հանձնել նախագահ Ահմադինեժադին

ԵՐԵՎԱՆ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆԴՐԵՄ: Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը սեպտեմբերի 13-ին ընդունել է Իրանում Հայաստանի դեսպան Գրիգոր Առաքելյանին՝ հավատարմագրերի հանձնման կապակցությամբ: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին



ՀՀ ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից, դեսպան Առաքելյանն Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադին է փոխանցել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի ողջույնները եւ նշել, որ իր պաշտոնավարման ընթացքում կգործադրի առավելագույն ջանքեր՝ երկկողմ հարաբերությունների զարգացմանն առավել նպաստելու եւ նախանշված երկկողմ ծրագրերն իրականացնելու ուղղությամբ: **Հայաստանի ձեռարկված Իրանի ԽՆՀ տասար քաղաքի միջազգային ցուցահանդեսում**

Օգոստոսի 5-ից մենք գտնվում էինք Մազանդարանի շրջանի Խնեշասար գյուղակում: Հիանալի օդ եւ բնություն, գեղեցկություն, քանի որ կանաչ գույնի վրանները հանգրվանել էին Կասպից ծովի գեղատեսիլ ափերից մեկում, որը հարակից է Մահմուդաբադ քաղաքին: Ձեռարկվածի եւ Ջրոսաշրջության միջազգային ցուցահանդեսը իր դռներն էր բացել այցելուների առջեւ: Ցուցահանդեսին իրենց մասնակցությունն էին բերել տարբեր երկրներ ներկայացնող տաղավարներ եւ պատշած ձեռով այցելուներին ներկայացնում ու ծանոթացնում էին տվյալ երկրի արվեստը, մշակույթը եւ տուրիստական վայրերը, նաեւ բավարար չափով տեղեկացվում էր Իրանի հետ տվյալ երկրի ունեցած հարաբերությունների մասին:

Սեր տաղավարը Իրան-Հայաստան բարեկամության միության հովանու ներքո ներկայացնում էր Հայաստանը իր տեսարժան վայրերով, մշակույթով, ձեռարկվածով...

Ցուցահանդեսի հիմնական նպատակն էր ամրապնդել եւ տարածել տարբեր երկրների ժողովուրդների միջեւ բարեկամական ու եղբայրական կապերը, զարգացնել Իրան-Հայաստան գիտական, արվեստի, հասարակական ու մշակութային, տնտեսական, տուրիստական ոլորտները:

Նշելի է, որ այսպիսի միջոցառումները հաճախակի դառնան եւ ավելի մեծ պատասխանատվություն կրեն եւ ավելի լայն ոլորտ ընդգրկեն, քանի որ այսպիսի միակ միջոցառումներն են, որ հնարավորություն են տալիս ազգերին շփվել եւ մոտիկից ծանոթանալ միմյանց, որի հիմքում ընկած է միայն բարվոք կյանք \$ խաղաղ աշխարհի ստեղծելը, իսկ եղածը պահպանելը: Ուզում ենք նշել, որ ցանկացած ազգ առանց մշակույթի գոյություն չունի եւ հակառակը՝ մշակույթը առանց ազգի առկայության գոյություն չի ունենա:

Այս դեպքում է, որ մարդը նայելով բազմազգ մշակույթին, բնությունից ծնունդ առած տարբեր ազգերին, որոնք տարածվել են աշխարհի տարբեր անկյուններում, մի պահ մոռանում են թշնամությունը, ազգերի միջև առկա տարածայնությունները եւ ամեն ինչ գեղեցիկ է ներկայացվում եւ հոգիդ լցվում է խաղաղությամբ:

Ինչքան որ տարբեր ազգեր շատ լինեն այնքան մշակույթով հարուստ կլինենք եւ ավելի հետաքրքիր ու ժողովուրդը սովորելու § հետաքրքրվելու շատ բան կունենա: Աշխարհը բազմազանությամբ է գեղեցիկ:

Հիշատակելի է, որ Չեռարվեստի ու Զբոսաշրջության միջազգային ցուցահանդեսի բացման օրը համընկել էր իրանական տոնակատարությունների՝ Հասան Ղայեմի ծնունդին:

Գեղեցիկ երգ ու երաժշտությունը, հրավառությունը, երեկույթը վարողի հումորային խոսքը եւ տարբեր մրցութային խաղերի կազմակերպելը լրացնում էին ցուցահանդեսի ուրախ, աշխույժ միջավայրը:

Վերջում ուզում ենք շնորհակալություն հայտնել ցուցահանդեսի կազմակերպիչներին՝ հանձնիս Իրան-Հայաստան Բարեկամության միության ղեկավար կազմին:

Նաեւ Ի.Ի.Հանրապետության Ծովային ուժին, որի տարածքը տրամադրվել էր մեզ գիշերելու, հանգստանալու եւ սնունդը ապահովելու համար:

Ալվինա Բաղդասարյան

Հասարակական

Շ. 3. Դաշնակցության մոտեցումները Հայ-Թուրքական հարաբերությունների ու այլ համահայկական հարցերի շուրջ իրանահայ համայնքում

2009 թվականի սեպտեմբեր 17-ին Թեհրանի «Չարմահալ» միութնում ՅՊՀ-դաշնակցության հրավերով՝ «Ալիք» օրաթերթի ամուսնով, տեղի ունեցավ մի համընկյուն Հայ-Թուրքական հարաբերություններ թեմայով: Օրվա բանախոսն էր ՅՊՀ բյուրոյի անդամ պրն. Վիգեն Բաղումյանը: Հրավիրված էին Թեհրանի Հայոց Թեմի պատգամավորները և միությունների ներկայացուցիչները:

Մուտքի դռան մոտ դրված էր մի գրքույկ, որտեղ շարադրված էր մի տեքստ՝ ուղղված ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին: Տեքստի բովանդակությունը հետևյալն էր. «Մենք դատապարտում ենք օգոստոսի 31-ին ստորագրված արձանագրությունները Հայաստանի և Թուրքիայի միջև և պահանջում ենք չեղյալ հայտարարել դա ու դադարեցնել Հայ-Թուրքական բանակցությունները»: Որոշ դաշնակցականներ պահանջում էին, որ ներկաները ստորագրեն տեքստի տակ:

Օրվա հանդիմանված վարիչը տեղեկացրեց, որ սա երկրորդ հանդիպումն է Հայ-Թուրքական թեմայով, սակայն չնչեց, թե առաջին հանդիպումը երբ է եղել, մի գուցե նեղ շրջանակի համար է դա կազմակերպվել և համայնքը տեղյակ չի եղել:

Քանի որ մեր համայնքում ազգային իշխանությունը կամ կուսակցությունը ցանկություն չունեն համայնքային հարցերից ու անցուդարձերից մանրամասն տեղյակ պահեն մեր համայնքի անդամներն, դիմում են նման ձևերի և օգտվում են այս առիթից: Ստորև ներկայացնում ենք այս հանդիպման բուն իրականությունը առանց որևէ մեկնաբանության, որը կարծում ենք լավ աղբյուր կարող է հանդիսանալ այն մարդկանց համար, ովքեր հետաքրքրված են մեր համայնքի մի շարք ղեկավարների դիրքորոշումներով և ցանկանում են քննարկման նյութ դարձնել այն: Կարևոր հարցերի ընդգծումը կատարված է մեր կողմից՝ էլ ավելի մեծ ուշադրության արժանացնելու համար:

Օրվա բանախոս պրն. Վիգեն Բաղումյանը սկզբից որոշ տեղեկություններ փոխանցեց Հայ-Թուրքական հարաբերությունների մասին և Հայաստանի Հանրապետության իշխանության վարած բանակցությունների մասին. այդ կապակցությամբ նա անդրադարձավ նաև իրենց դերակատարությանը այդ հարցում՝ որպես պետության մի մասնիկ:

Պրն. Վ. Բաղումյանը նշեց. «ՀՀ բոլոր իշխանությունները կարևոր են համարել Հայ-Թուրքական հարաբերությունները,

որի հետ մենք էլ համաձայն ենք եղել և վեճ չունեք այստեղ: Այս կապակցությամբ հիմնական քայլը սկսեց շուրջ երեք տարի առաջ՝ գաղտնի բանակցությունների ձևով, այդ գաղտնի բանակցություններում Հայաստանի կողմից մասնակցում էր փոխարտգործ նախարար Արման Կիրակոսյանը: Մեզ, որպես կողմիցիայի անդամ, տեղյակ էին պահում, թե ինչ է տեղի ունենում այդ բանակցությունների ընթացքում: Այդ բանակցությունները զուտ տեսակետների փոխանակումներ էին և որևէ պայմանավորվածություն կողմերի միջև չկար: Հետագայում երկու Ֆակտոր դերակատար եղավ այս գործընթացի վրա. առաջին՝ Ռուս-Վրացական պատերազմն էր: Ռուսները նկատեցին, թե ամենահարմար ուժը, որ կարող է փոխարինի արևմուտքին տարածաշրջանում Թուրքիան է, Ռուսները պայմանավորվեցին Թուրքիայի հետ, ասելով, թե ինչու՞ մենք՝ Թուրքիան և Ռուսաստանը ձեռք չվերցնենք կովկասը և Թուրքերը համաձայնվեցին Ռուսաստանի հետ և Ռուս-Վրացական պատերազմից անմիջապես հետո Թուրքիան հրապարակեց իր պլատֆորմի մասին՝ կովկասի անվտանգության ու խաղաղության վերաբերյալ: Նպատակն արևմուտքի ազդեցության կանխումն էր տարածաշրջանում: Շուրջ մեկ տարի առաջ, երբ Սերժ Սարգսյանը Մոսկվայում էր գտնվում հայտարարեց Հայ-Թուրքական հարաբերությունների մոտալուտ սկսելու մասին: Սա խոսում էր նրա մասին, որ արդեն Ռուսաստանը կարող էր ստեղծել Հայ-Թուրքական հարաբերությունների կապակցությամբ: Հիմա կարելի է ասել, որ Ռուսաստանը այն կարծիքին է, որ՝ այդ, մենք ասել էինք հարաբերություններ ստեղծել, բայց ոչ այն խորությամբ որ դուք եք գնում:

Մենք Սերժ Սարգսյանի հետ կողմիցիայի մեջ մտնելու համար պայմանագիր կնքեցինք, որտեղ, բացի մի շարք հասարակական հարցերից, ազգային հարցերի հետ կապված կար մի գլուխ, որտեղ ասված էր, թե նախագահը բոլոր համահայկական բնույթի հարցերի շուրջ, ինչպիսիքն է Հայ-Թուրքական հարաբերությունները, ԼՂՀ, Ջավախքի հարցը և այլն, նախքան որևէ քայլի դիմելը, անպայման պետք է խորհրդակցի մեր կուսակցության հետ և, եթե այդ առումներով մենք համաձայնության չգանք, հեռանում ենք կողմիցիայից: Ֆուտբոլի մրցության դիտելու պատրվակով Թուրքիայի նախագահի հրավիրելու կապակցությամբ մենք ասացինք՝ դեմ չենք, դուք հրավիրեք, մենք էլ ցույց կը կազմակերպենք Թուրքիայի նախագահ Գյուլի այցելության դիմաց: Այդ ընթացքում ՀՀ իշխանությունը մեզ հանձնեց այն փաստաթուղթը, որ Թուրքիայի ու Հայաստանի արտգործնախարարների միջև էր գրված: Տարբեր փաստաթղթեր երեք կամ չորս անգամ եկավ մեր սեղանների վրա ու միշտ փոփոխության ենթարկվեց, սկզբից Թուրքիան որոշ նախապայմաններ էր դրել, որից հետո հրաժարվեց իր նախապայմաններից: Մեր և ներկայիս իշխանության հետ կապակցությունները գնահատականների շուրջ է և ներկայիս իշխանության քայլը կարող ենք անվանել անգուշտություն և անհեռադատություն: Նրանք ազգային հարցերին կամ քաղաքականությանը մի քիչ ավելի լավատեսորեն են նայում, մինչև ապրիլ 22-ին հայտնվեց նախաստորագրված փաստաթուղթը: Մենք ասացինք. երկու հարցեր պետք է հանել, առաջինը՝ պատմական հարցերի շուրջ համեմատողովի կազմումը և երկրորդը՝ կապված սահմանների ճանաչման հետ ու միջազգային ստորագրված պայմանագրերի ընդունումը: Դրանից հետո կողմիցիայից դուրս ենք եկել ու արդեն եղել ենք անտեղեկացված ու ստիպված ենք եղել համապատասխան քայլերի դիմել:

ԱՄՆ-ի նախագահ Օբաման խոստումներ էր տվել հայ համայնքին, երկու կարևոր խոստումներ. առաջին՝ Միացյալ Նահանգները, ընդունելով հայոց ցեղասպանության փաստը կճանաչի այն և Լեռնային Ղարաբաղի հարցում կօգնի հարցի լուծմանը: Եթե ԱՄՆ-ը ճանաչեր ցեղասպանությունը, մեզ միջազգային օրենքի ուժ էր տալու: Մենք՝ հայերս ԱՄՆ-ին տվեցինք համապատասխան զեմքը, որպեսզի չկատարի իր խոստումը: Ապրիլի 22-ի հայտարարությունը և ճանապարհային քարտեզը երկնքից ընկած մանանա էր ԱՄՆ-ի համար, այդ պատրվակով Օբաման ասաց՝ զիտեք, ես չեմ ուզում խանգարել ձեր բանակցություններին, եթե ես ճանաչեմ

ցեղասպանությունը, կխանգարվի բանակցությունները: Օբամայի փոխնախագահ՝ Բայդենը առաջին անգամ Ամերիկայից զանգահարեց մեր գրասենյակը և ասաց, որ ձեր նախագահը խնդրել է մեզանից չխանգարել բանակցությունների գործընթացին և հետևաբար նախագահ Օբաման այդ բառը չօգտագործեց: Բայց Սերժ Սարգսյանը, ասաց՝ այդպիսի բան չի եղել և ուզեցել են շահագործել: Օգոստոսի 31-ի գիշերը ես երևանում էի և ընթրիքի ժամանակ Սերժ Սարգսյանը զանգեց Յրանդ Մարգարյանին և ասաց, որ «Ուզում ենք տեղեկացնել, որ նախաստորագրել ենք երկու փաստաթուղթ թուրքերի հետ և ուզում են, որ դուք ինձանից լսեք դա և ոչ թե ուրիշից»: Մենք արդեն կուպիցիայից դուրս էինք եկել և ինքը՝ նախագահը պարտակցություն չունեի մեզ տեղեկացնելու: Հաջորդ օրը հայտարարությանը հանդես եկանք և քննարկեցինք այդ փաստաթուղթը և դրա մեջ գտանք որոշ պորբլեմներ: Այդ փաստաթղթերի համաձայն Հայաստանը և Թուրքիան մշակում են հարաբերություններ առանց նախապայմանների, **բայց խորում պայմաններով, և** մեզ մտահոգում են հետևյալ հարցերը. առաջին, որ այստեղ հիշատակված է, թե երկու երկրներում արտգործնախարարների հսկողության տակ կազմվում է մի համընթացող պատմաբանների մասնակցությամբ, որը երկու երկրների պատմական վեճերը քննարկում, հետազոտում և արխիվային փաստաթղթերը ի հայտ է բերում և հանձնում է հասարակական կարծիքին, եթե անհրաժեշտ լինի, նաև միջազգային փորձագետներին: **Մենք միայն գեղասպանության հետ կապված պատմական հարց ունենք**, որը չենք համարում վիճարկելի: Ել ուրիշ պատմական հարց չունենք քննելու: Տարբեր երկրներ ընդունել են հայոց ցեղասպանության իրողությունը, **աշխարհը ընդունել է**: Սա ռազմավարական զենք է մեզ համար, Հայաստանի ղեկավարությունը պետք է հեռատես լինի, սահմանը բացելու հարցում և չկարևորի երկու հատ տուրիստի գալը Հայաստան և Հայաստանից երկու տուրիստի գնալը տաճկանում և փախելը լողանալու: Մենք վերջ ենք տալիս բոլոր այն հողային պահանջներին, որ ունենք, ես չեմ ասում անպայման հող կատանանք Թուրքիայից, զոնե հող չստանանք, համապատասխան ուրիշ բան կարող ենք ստանալ, կարողա գումար կամ կրեդիտներ ստանանք, զուցե նաև խորհրդանշական տարածքներ ստանանք, որովհետև ոչ ոգիս նորմալ պայմաններում հող չեն տրամադրի, սա հասկանալի է: Հաջորդ կետը այն է, որ մշված է Հայաստանը և Թուրքիան դեմ են տեռորիզմին և պայքարելու են դրա դեմ, այսինքն՝ թուրքերը, որ մտնում են Իրաք՝ սահմանները անցնում են և իրենց ուզած գործողությունները անում են, տեռորիզմ չի: Ըստ միջազգային նորմերի, երբ ընդունում ես միջազգային օրենքները ուրեմն **ընդունում ես բոլոր երկրների տարածքային ամբողջականությունը**, ուրեմն՝ ընդունում ես նաև Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Հայաստանի իշխանությունը ասում է՝ մենք հրաժարվում ենք հողային պահանջներից, ճանաչում ենք Թուրքիայի հողային ամբողջականությունը, և թուրքերն էլ կասեն, որ ԼՂ հարցը ադրբեջանական հարց է և **Հայաստանը ճանաչել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը**: Իսկ մենք ասում ենք՝ ընդունում ենք ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը: **Լեռնային Ղարաբաղի հարցով մենք տեսնում ենք թաքնված միջամտություն թուրքիայի կողմից**: Հակառակ Հայաստանի շատ ուժերի որ, պայմանագիրը առանց նախապայմանների է, մենք տեսնում ենք երեք նախապայմաններ, որոնք կոպիտ ձևով ձևավորում են տարբեր ձևի մեջ: Հոկտեմբերի 17-ին ՀՀ նախագահը տրամադրի է գնալ Թուրքիա, որի ընթացքում ստորագրեն այդ փաստաթուղթը և հետո հանձնեն երկու երկրների խորհրդարաններին համաձայնության համար: Դա շեղակցության նախատեսությունը հետևյալն է, որ **Թուրքերը կզձգեն և ոչ սահման կբազեն և ոչ էլ դիվանագիտական հարաբերություններ կստեղծեն, իրենց խորհրդարանը չի համաձայնվի կամ կզձգի: Թուրքերը կարողազանդեն, որ իբր թե հայերը չեն համագործակցում և այլն**: Հենց միայն պայմանագրի ստորագրումը իրենց հերիք է, որ աշխարհի առջև իրենց գործերը կատարեն: Հայաստանի խորհրդարանի մեծամասնությունը իշխանամետ է և կհաստատ

այն, ինչ որ մի թիվ կա՝ մերոնք (քանի դաշնակցական պատգամավորներ) և մի քանի ուրիշ հոգիներ կընդհանան: Այդ պայմանագրի մեջ ասված է, որ ստորագրելուց հետո վեց շաբաթ երկու երկրներում անց կըկացվի հանրային քննարկում, **սակայն ասվել է, որ սա քննելու չէ, առաջարկներ և չի կարող լինել**:

Հայաստանյան կուսակցությունները, բացի ժառանգությունից և ինչ որ չափերով Հայոց Ազգային Կոնգրեսից՝ Լևոն Տ. Պետրոսյանից, բոլորը համաձայն են Հայ-Թուրքական համաձայնություններին: Իմ տպավորությամբ Հայաստանի բնակչության 90 տոկոսից ավելը դեմ չէ այդ պայմանագրի հետ: Հայաստանի հեռուստակայանները վերահսկվում են նախագահության կողմից: Բայց փաստը մնում է փաստ, որ իրականում Հայաստանի բնակչության 7 տոկոսը համաձայն չի լինի Հայ-Թուրքական պայմանագրի հետ: Հիմա մենք սկսել ենք ստորագրահավաք, ստորագրահավաքը միշտ ավելի լավ է: Սփյուռքում և Հայաստանում Ռամկավար և Հնչակյան կուսակցությունները իրենց խորը մտահոգություններն են արտահայտվել այդ հարաբերությունների կապակցությամբ և Հայաստանում Ռամկավար կուսակցության թևը, որ կոչվում է «Արմենական Ռամկավար Ազատական Կուսակցություն», ինչ որ ձևով մտահոգություն է արտահայտել:

Պրն. Վիգեն Բաղունյանի խոսքերից հետո 4-5 դաշնակցականներ հայտնեցին իրենց տեսակետները, որոնք ամփոփ ձևով ներկայացնում ենք ձեր ուշադրությանը.

1-Թուրքը ինքն է սահմանը փակել է և ինքն էլ պիտի բացի և ինչ պայմանագրի մասին է խոսքը, որևէ պայմանագիր չպետք է լինի:

2- Մենք, ինչ որ պահանջներ ունենք, հետագայում կներկայացնենք:

3- Այդ ստորագրահավաքը պետք է նեղ սահմանից դուրս գա, գնա եկեղեցիներ, որտեղ կրոնական արարողություններ կան և ժողովրդից ստորագրություններ վերցնենք:

4- Սահմանը, որ բացվի հայաստանից կարող է իր տունը ծախի և թուրքերը Հայաստանը կը գնեն և փաստորեն Հայաստանը կդառնա Թուրքիա:

5- Հայաստանի նախագահը պայմանագրի մեջ պետք է շեշտի մեր հողային պահանջները, ցեղասպանության հարցը, Ղարաբաղի հարցը և այլը: Եթե մենք մոռանանք, որ պահանջ ունենք Թուրքիայից, Ղարաբաղի հարց ունենք և ցեղասպանության ճանաչման հարց ունենք, տարիներ հետո Հայաստանը գոյություն չի ունենա՝ 10 կամ 20 տարի հետո:

6-2 ենք հասկանում սահմանի բացումը և հարաբերությունները ինչ դրական արդյունք կարող է ունենալ:

Հարց տրվեց նաև Ռուսաստանի ազդեցության մասին. այս հարցերի կապակցությամբ օրվա բանախոս պրն. Վիգեն Բաղունյանը այսպես արտահայտվեց. «3 կամ 4 միլիոնանոց Հայաստանը իր մասշտաբով Թուրքիայի երկրորդ կարգի քաղաքի չափին է: Եթե թուրքերը իսկապես մտածեն ազդել Հայաստանի վրա նրանք մեկ միլիարդ դոլար տան իրենց բիզնեսներին և ուղարկեն Հայաստան ներդրումների համար, ինչ տեղի կունենա: Հայաստանում ղեկավարությունը կարծում է, որ Եվրոպացի է եղել: Եվրոպայում ոչ Եվրոպացիներին բնակարան չեն վաճառում, իսկ **Հայաստանում հողն կարող են վաճառել օտար երկրացիներին**: Մենք մեր փոքր ժողովրդի մեջ այնպիսի օրենք ենք անցկացրել, որ Եվրոպացի չափի, որ դուք լավ չեք: Եվրոպացման ամեն տեսակ բաներ են անում Հայաստանում: Ֆրանսիայում աղանդները արգելում են, բայց Հայաստանում չեն արգելում և ասում են Եվրոպական նորմերին դա չի համապատասխանում: Հայաստանի քաղաքական կուրսը չի համապատասխանում ՆԱՏՈ-ին և Ամերիկային, հետևաբար այդ երկրները լավ չեն հովանավորում Հայաստանին: Այսօր Ռուսաստանը միակ ռեալ ուժն է, որ մենք կարող ենք ազատ դաշնակցել իրենց հետ: Հայաստանի իշխանությունները ուզում են մոտենալ Ամերիկային, որպեսզի կանխեն Լևոն Տ. Պետրոսյանի ազդեցությունը՝ մի կողմից ներքին հարցեր լուծեն, մյուս կողմից լավ հարաբերություն ստեղծեն ԱՄՆ-ի հետ: Հայկական բարձր մակարդակներում մեզ ասել են, որ Ռուսները հայտնել են, թե իրենք դժգոհ են Հայ-Թուրքական հարաբերությունների գործընթացից և Հայաստանը չափերը անցել է, սահմանի բացումը ուրիշ բան է, **հարաբերությունների**

խորագույնը և ամերիկացիների միջամտությունը մտահոգում է ռուսներին: Մենք դեմ չենք սահմանի բացման հետ, դեմ չենք պայմանագիր ստորագրելու հետ, բայց՝ առանց նախապայմանների: Մասնագիտական մոտեցում կա և եզրակացություն, որ Հայաստանը անպաշտպանված է Թուրքիայի տնտեսության դիմաց: **Մենք չենք դրել նախագահի հրաժարականը այլ արտգործնախարարի հրաժարականն ենք պահանջել,** ինչպես թուրքերն են արել՝ մինչև ապրիլի 22-ը նախարարը ուրիշ մեկն էր, 22-ից հետո նախարարը փոխվեց և նոր նախարարը նոր մոտեցումներով հանդես եկավ:

7-Երեք հատ պայման են դրել համաձայնագրի մեջ, որ երեքն էլ Թուրքիայի պահանջված պայմաններն են: Այսինքն՝ մենք աղավաղում ենք հայ – թուրքական հարցը, մոռանում ենք մեր պահանջները, մենք կարող ենք դիվանդանային հարաբերություններ ունենալ և միևնույն ժամանակ պահանջներ էլ ունենալ, ինչպես տարբեր երկրներ ունեն նման պահանջներ և միևնույն ժամանակ ունեն դիվանդանային հարաբերություններ: Եթե Հայաստանի յուրաքանչյուր սխալը քննադատեինք, այստեղ չէինք հասնի: Եթե Հայաստանի իշխանությունը հարգում է հայ ժողովրդին և իրեն համարում է հայ ժողովրդի ղեկավարներ, պիտի իմանա, որ **7 միլիոնանոց սփյուռքը և երեք ավանդական կուսակցությունները Սերժ Սարգսյանին չի քվեարկել և նրանք կարող են որոշումներ կայացնել այն խնդիրների շուրջ, որոնք կապվում են ուղղակի Հայաստանի հետ: Նրանք իրավունք չունեն որոշումներ կայացնել այն հարցերում, որոնք կապվում են պատմական Հայաստանի հետ:** Մեր երկիրը, մեր ժողովուրդը խնդիր ունի և մի երկիր, որ խնդիր ունի, չի կարող ապահով ապրել: Մենք պետք է այս գործընթացի դիմաց պայքարենք: Հայաստանում այնպես են ձևացնում, որ կարծես որևէ խնդիր չկա, հեռուստատեսությունը չի արձագանքում և ժողովուրդը համակերպվում է:

8- Սփյուռքի տարբեր զաղութներում պետք է կազմակերպել ցույցեր Հայաստանի դեսպանատների առջև, դատապարտել համաձայնագիրը և պահանջել երկու նախարարների հեռացումը:

9- **Հայաստանի ժողովուրդը բոլորովին տեղակ չի** այդ համաձայնագրից և բնականաբար համաձայն է Հայ-Թուրքական համաձայնագրին:

10-Հայկական, ազգային ու կրոնական բոլոր կենտրոններին հորդորել՝ դատապարտեն, օրինակ, թերթերը, Պատգամավորական ժողովը, միությունները, Թեմական հերոհուրդը և այլն:

10- Հայաստանի կուսակցություններից ու այլ մարմիններից կազմել մի համադրող հանձնախումբ, որը պետք է կազմակերպի ցույցեր, բողոքներ և լրատվություն կատարի ներքին ու արտաքին լրատվամիջոցների համար:

11- Ամբողջ հայաստանի տարածքում՝ քաղաքներում ու գյուղերում՝ թռուցիկներ ցրել և հրավիրել ակտիվ ցույցի երևանում:

12-Հայաստանի ոստիկանության միջամտության պարագայում տալ համապատասխան պատասխան, ընդունելով բոլոր հետևանքները:

Պրն. Վիգեն Բաղունյանը կրկին արտահայտվեց ու նշեց, որ ոչ բոլոր սփյուռքն է դեմ այս համաձայնագրին, օրինակ, Հայ Բարեգործական Միությունը ողջունել է այս համաձայնագիրը: Նա ասաց, որ քաղաքակիրթ ձևով պետք է տեղեկացնենք դեսպանատանը, որ մենք ինչ ենք ուզում: Նա ասաց. «Մենք պայմաններից ելնելով կարող ենք դնել նախագահի հրաժարականի պահանջ, առայժմ մենք այդ տրամադրությունը չունենք, մենք չուզելով ենք մտել կոալիցիայի մեջ, միայն հանուն Հայաստանի կայունության: Սերժ Սարգսյանի հեռանալու դեպքում իշխանության կգա Լևոն Ս. Պետրոսյանը և դրա համար պաշտպանել ենք Սերժ Սարգսյանին, որովհետև Սերժը ինքը Ղարաբաղյան պատերազմի փորձառություն ունի, ազգային առումներով մեզ ավելի մոտ է, քան Լևոն Ս. Պետրոսյանը, որը Հայաստան-Թուրքիա հարաբերությունները գտնում է թուրք Ամերիկյան հարաբերությունների շրջանակներում: Բայց, ըստ պայմանների, եթե անհրաժեշտ նկատենք, կարող է Լևոն Ս. Պետրոսյանին հանդուրժենք և պահանջենք Սերժ Սարգսյանի հրաժարականը: Հիմա

արևմուտքի կողմից նախկինի նման Լևոն Ս. Պետրոսյանին հովանավորություն չկա, որովհետև Սերժ Սարգսյանը նաև ինչ-որ տեղ բավարարում է արևմուտքին, որովհետև հայ-թուրքական հարաբերությունների արդյունքում տարածաշրջանում ժեռպոլիտիկ փոփոխություններ կարող են լինել: Որովհետև Ռուսաստանի միակ հենարանը անդրկովկասում Հայաստանն է: Մենք ենք դրել սփյուռքի նախարարության ստեղծման պահանջը, որը դրվեց Ռ. Քոչարյանի ժամանակ, բայց նա ասաց, որ ինքը համաձայն չի և դա պրոբլեմ կստեղծի, բայց Սերժ Սարգսյանը ընդունեց և դիմեց մեզ, որ ներկայացնենք մի նախարար, մենք մերժեցինք և ասացինք, որ սփյուռքի նախարարը պիտի լինի անկուսակցական»:

13- Թուրքերը իրենց ձեռքով սահմանը փակել են, դրանից ավելի լավ բան ինչ էինք ուզում: Հիմա ուզում են անուղղակի Հայաստան ներխուժել, մենք ողջունում ե՞նք դա:

14-Թուրքիայի հետ ոչ բանակցություն, ոչ մի համաձայնություն, ոչ մի հարաբերություն չպիտի լինի: Դրանք ահավոր մի վիշապ են, որ պետք է զգույշ լինել:

Ընդհանրապես այս հանդիպումը ազատ չէր համայնքի հարցերով հետաքրքրվողների համար և միայն այն մարդիկ էին կարող մասնակցել, որոնց անձնապես զանգահարել էին, այդ իսկ պատճառով հակառակ կարծիքներ արտահայտվողներ քիչ եղան, սակայն այնուամենայնիվ արծածվեցին նաև հետևյալ մտքերը՝

1-Ամեն դեպքում Թուրքիան, որպես տնտեսական մրցակից, լինելու է Հայաստանի համար: Մենք այն բնագավառներով կմրցենք, որ ավելի լայն հնարավորություններ ունենք՝ արվեստի, մշակույթի և այլն:

2- Այնպես չէ, որ Հայաստանի ժողովրդի մեծամասնությունը ազգային հարցերով հետաքրքրված չէ և չի հասկանում: Այդտեղ կան քաղաքական կուսակցություններ և տարբեր ուժեր, որոնց համար ազգային հարցերը կարևոր արժեքներ են:

3- Չենք կարծում, որ, եթե Օբաման էլ ցեղասպանություն բառը օգտագործեր, ինչ- որ մեծ փոփոխություններ պետք է լիներ, և մենք պետք է այդ միջոցով հասնեինք մեր պահանջներին:

4- Եթե 20 երկիր 20 տարվա մեջ ճանաչել է, ասենք թե 50 տարի էլ պետք է պայքարենք, որպեսզի լավագույն դեպքում՝ 50 երկիր էլ ճանաչի, հետո ի՞նչ, այս հարցերի լուծումը վերջիվերջո Թուրքիայի հետ պետք է գտնել ու թուրք ժողովրդին պետք է համոզել և այս հարաբերությունների գործընթացը կարող է նպաստել դրանց:

5-20 պետություն որ ճանաչել է ցեղասպանությունը, չի ներկայանում ամբողջ աշխարհը, զոնե պատմությունը ցույց է տվել մեզ, որ մեր հարցերի լուծման գործում չենք կարող հույս դնել տարբեր երկրների վրա:

6- Սահմանի ճանաչումը նոր չի կատարվել, երբ Հայաստանը անկախացումից հետո դարձավ ՄԱԿ-ի անդամ, արդեն ճանաչեց բոլոր երկրների տարածքային ամբողջականությունը:

7- Դուք, որպես կուսակցություն կամ համայնքի հասարակական միավորներ, հանգիստ կարող եք խոսել ազգային տարբեր հարցերի շուրջ, բայց Հայաստանի պետությունը այդ համաձայնագրերում երբեք չի՞ կարող հանդես գալ տարածքների պահանջարկով:

8- Եթե Թուրքիայի խորհրդարանը չընդունի համաձայնագիրը, միջազգայնորեն Թուրքիայի համար բացասական կետ կլինի և ոչ թե մեր համար:

9- Հայաստանի իշխանությանը թիրախ դարձնելու և քարկոծելու փոխարեն՝ մենք պետք է թիրախ դարձնենք միջազգային ատյաններին, ԱՄՆ-ին և այլն: Այս ձևով կարող ենք օգտավետ լինել այս գործընթացին, որտեղ որևէ նախապայման էլ չկա և ինչ-որ նշում եք, ենթադրություններ են, որոնք ավելի շուտ կուսակցության ներքին խոհանոցին կամ արտաքին խոհանոցին կարող է օգտավետ լինել:

10- Երեք հանձնաժողովների ստեղծումը բոլորովին էլ չի նշանակում, որ մենք մոռանում ենք ցեղասպանությունը և այլն, այլ դրանք մի գործընթաց են լինելու, որտեղ հարմար առիթ կլինի թուրք ժողովրդին նաև համոզել պատմական իրականությունները:

11- Հողային պահանջները ավելի շուտ երազանքային բաներ են թվում, բայց Աստված տա այնպիսի պայմաններ ստեղծվեն,

որ դրանք իրականանան, բայց ներկայիս Հայաստանի ժողովուրդը չի կարող երազներով ապրի:

12- Կուսակցությունը անցյալում հակահայաստանյան տրամադրություն է ստեղծել համայնքում, որը բավականին վնասներ է հասցրել, արդյոք չէ՞նք ուզում դասեր քաղել անցյալից:

13- Դաշնակցությունը մինչև Հայաստանի անկախացումը միշտ թուլացրել է և քարկոծել է Հայաստանին, այդպիսով Հայաստանն է թուլացել և ոչ թե կոմունիստական սիստեմը կամ իշխանությունը, մինչդեռ Ռամկավար Ազատական Կուսակցությունը միշտ օժանդակել է իր նպաստն է բերել Հայաստանին, որով նպաստել է նրա բարոյ գարգացմանը: Այդ սխալն ընդունել են նաև որոշ դաշնակցական լիդերներ:

Վերջում պրն. Վիգեն Բաղդումյանը ներկայացրեց իրենց որոշումները համայնքում հետևյալ ձևով. «Մեր կառույցներին մենք կտրամադրենք տեքստ և ինչպիսին, որ ուզում են դարձնեն և փոխանցեն ՀՀ դեսպանատանը, բայց պետք է հասցեագրված լինի Հայաստանի նախագահին: Ուզում եք դուք տվեք, չեք ուզում, տվեք մեզ՝ մենք կներկայացնենք, բայց պետք է շուտ անել՝ մեկ շաբաթվա ընթացքում: Մեկ տեքստ էլ պատրաստել ենք, որ կուզենք, ովքեր, որ համաձայն են ստորագրեն:

Հարկ է նշել, որ, երբ դաշնակցությանը հակառակ կարծիքներ հնչեցվեցին, երկու դաշնակցականներ ժողովի կարգը խանգարելով, ասացին, որ իրավունք չկա կուսակցությանը քննադատել, նրանք չէին կարող հանդուրժել իրենց կարծիքին հակառակ կարծիքներ լսել: **Ռ. 7.**

Զրույց լեռնագնաց պրն. Զանես Ավետյանի հետ

Հ. Խնդրում եմ ներկայացնեք Ձեր կենսագրությունը:

Ծնվել եմ 1958 թվին Փերիա գավառի Կարդուն գյուղում: Նախնական կրթություն եմ ստացել նույն գյուղում, ապա ընտանիքիս հետ տեղափոխվել եմ Թեհրան և 1 տարի սովորել եմ «Իրան փիրուզ», ապա՝ «Նայիրի» դպրոցներում: Միջնակարգ ուսումս էլեկտրիկային ճյուղում շարունակել եմ պարսկական դպրոցում: Ընդունվել եմ համալսարան և ստացել եմ «արդյունաբերության ղեկավարություն» (مدیریت صنعت) մասնագիտության վկայական (լիսանս) և հիմա ընկերության կառավարիչ եմ:

Հ. Քանի՞ տարի է, որ զբաղվում եք լեռնագնացությամբ:

Այն ժամանակ, որ երիտասարդ էի, «Սիփան» խմբի հետ լեռնագնացության էի մասնակցում, այնուհետև 10-15 տարի չեմ մասնակցել լեռնագնացության, իհարկե, սար բարձրանում էի, բայց ոչ գագաթ հասնելու նպատակով, մինչև և հանդիպեցի պրն. Հրաչ Վարդումյանին, և 2 տարի առաջ նորից սկսեցի «Նայիրի» խմբի լեռնագնացների հետ լեռ բարձրանալ:

Հ. Ի՞նչու որոշեցիք նվաճել Արարատի գագաթը:

Իմ կարծիքով ամեն հայ լեռնագնացի նպատակներից մեկն է նվաճել Արարատի գագաթը, Արարատը մեր սիմվոլն է, մեր սարն է, այն մեզ համար սուրբ սար է:

Հ. Ի՞նչ նախապատրաստություններ էիք տեսել Արարատ գագաթը բարձրանալու համար:

Մենք կազմեցինք 6 հոգանոց մի խումբ § 3 ամիս առաջ նախապատրաստվեցինք Արարատ բարձրանալու համար, այդ ընթացքում նվաճեցինք Չարին Բու (زرین کوه), Փաշուրե (پاشور), և Դամավանը (داموند) սարերը: Համադրության համար դիմեցինք նաև Թավրիզում գտնվող մի ընկերությանը, որը համադրեց մեր ծրագիրը Թուրքիայի լեռնագնացության Ֆեդերացիայի հետ:

Հ. Խմբի անդամները ո՞վքեր էին:

Անդամիկ Շահբազյանը, Ռոզիկ Տ. Հովհաննիսյանը, Չավեն Շահվերդյանը, Վարանդ Գրիգորյանը, Մերոբ Պողոսյանը և ես:

Հ. Խնդրեմ մանրամասն պատմեք Ձեր Արարատ բարձրանալու մասին:

Մենք ուրբաթ՝ հուլիսի 10-ին, Թեհրանից ճանապարհվեցինք դեպի Թավրիզ, այնտեղ մի շաբթ գրասենյակային գործեր կատարելուց հետո ճանապարհվեցինք դեպի Թուրքիա: Թավրիզում մեզ միացան «Խորրամ դարե» լեռնագնացության միությունից (هیئت کوه نوردی حرم دره) 3 հոգի: Թուրքիայում մենք մի գիշեր

հանգստացանք «Դուբա Եագիդի» հյուրանոցում և այցելեցինք այնտեղի տեսարժան վայրերը, որոնցից էր մի եկեղեցի, որը ձեռնափոխվել էր մսկիթի: Դուբա Եագիդում մեզ միացան նաև 4 հոգի՝ 3 շվեդահայ § մի Կորեացի. ընդհանուր խմբով 15 հոգի էինք: Ունեինք 2 ղեկավար, մեկը Թավրիզից՝ Սամադը և մյուսը Թուրքիայի լեռնագնացության Ֆեդերացիայից՝ Յուսեֆը:

Կիրակի՝ հուլիսի 11-ին, առավոտյան ժամը 8:30-ին ճանապարհվեցինք դեպի Արարատ: Երբ հասանք սարափեշին, մեր ծանր ապրանքները դրեցինք ջորիների վրա և շարունակեցինք մեր ճանապարհը: Ծանապարհին հանդիպեցինք գառնարածների, որոնք՝ թե գառներին էին արածեցնում և թե իրենց պատրաստած իրերն էին վաճառում անցողիներին, նրանց նայելով անկախ հիշում էի «Ա՛յ գառներ, սարի գառներ...» երգը:

Արդեն ճաշվա 2-ն էր, որ հասանք լեռան 3200 բարձրության վրա, մի գիշեր հանգստացանք այնտեղ և մեզ միացան 2 անգլիացի՝ իրենց ղեկավարների հետ:

Երկուշաբթի առավոտյան ժամը 8-ին ճանապարհվեցինք դեպի 4200 մետր բարձրությունը: Մինչև գիշերվա ժամը 12-ը անցկացրինք այնտեղ, այնուհետև ճանապարհվեցինք դեպի գագաթ: Մեր խմբից մի քանի հոգի եղանակի պատճառով չկարողացան շարունակել ճանապարհը, իսկ մենք շարունակեցինք և առավոտյան ժամը 6-ին հասանք Արարատ լեռան գագաթը: Գագաթի օդի ջերմաստիճանը 15 աստիճան գրոից ցածր էր, իսկ քամու արագությունը 35-40 կիլոմետր ժամում:

Երբ վերադարձանք հյուրանոց, Թուրքիայի լեռնագնացության Ֆեդերացիայի կողմից մեզ գնահատականներ տվեցին:

Հ. Ի՞նչ էիք զգում, երբ հասաք գագաթ:

Գագաթ հասնելու ժամանակ բոլորս այնքան հուզված էինք, որ անկախ մեզից բոլորս միայն արտասվում էինք:

Հ. Ի՞նչ կցանկանայիք ասել:

Շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, «Լույս» ամսագրի աշխատակազմին, որ կազմակերպեցիք այս հարցազրույցը, ցանկանում եմ ուժ ու կորով և մեծ եռանդ բոլորին և մեր հայ լեռնագնացներին:

Սոհեր

Մեր անցած ճամբան

Թ. Դարախանյան Սիրակյցի

Մասչեղ Սուլեյմանի Նաֆթի հորերը գնալով չորանում էին և Նաֆթի Ընկերությունը նոր հորեր էր փնտռում հարավային անապատներում, Պարսից Ծոցի հյուսիսային ափերում և Նաֆթի Ընկերության շահերից էին բխում, որ իր մարդույժի թիվը նվազագույնին հասցնի և այդ որոշումից պիտի տուժեին մեծաթիվ ընտանիքներ այդ թվում շատ հայեր: Եւ այսպես Նաֆթի Ընկերությունը որոշեց իր նստավայրը փոխադրի Աիվազ քաղաք և պարսիկ ու հայ բանվորների մեծագույն մասը աշխատանքից պատասխանեց իհարկե վճարումներով: Պարզորեն լսեցինք որ քանի քանիսներ հայ և պարսիկ թե հասարակ բանվոր և թե գրագետ աշխատատուներ ճիշտ միջնորդներ գտնելով կաշառք տվեցին և վնդվողների ցուցակից հանվեցին: Ուրեմն նորեն ամենքիս ծանոթ հայկական արտագաղթ սկսվեց՝ Խուզաստանի Նավթային նահանգի քաղաքներից՝ Մասչեղ Սուլեյման, Աբադան, Օմիդիե, Աղաջարի և փոքր թվերով՝ Հաֆտ-Էել, Նաֆտ-Սաֆիդ, Գաչ Սարան և Բանդար-Մահշահից:

Գաղթը ուղղված էր դեպի 3 քաղաք.

1-ԱՀՎԱԶ քաղաք, մեծ թվով հայ և պարսիկ աշխատավորներ Նաֆթի ընկերության ընտրված մնացողներից:

2-Թեհրան մայրաքաղաք, մեծ թվով հայ ընտանիքներ և գործազուրկներ:

3-Նոր Ջուղա, փոքր թվով հայ ընտանիքներ և գործազուրկներ:

Ժամանակը ծանր էր և պարապությունը խենթացնում էր մեր նման ջահելներին: Նաֆթի Ընկերությունից դուրս միայն կարելի էր ծանոթ, բարեկամ, միջնորդ ունենալ և տեղի կառավարական դպրոցներում կամ Հայ Միերդող դպրոցում ուսուցիչ դառնալ բայց պիտի զինվորություն վերջացրած լինեիր որևէ գործի համար, միայն մնում էր անձնական խանութներում իբր աշակերտ վարձվել, այն էլ մոտիկ հարազատ ծանոթի միջոցով և ամիսներ ձրի աշխատել մինչև փոքր վարձի հասնեիր: Օտար տեղ Մասչեղ Սուլեյմանում ոչ

մի տեղ գործի առիթ չկար և մնում էր հեռանալ օտար քաղաք այսինքն մեր պարագայում ամենից մոտիկ մեծ քաղաքը Անվագ քաղաքն որ 24 կիլոմետր հեռու էր և ճամբորդության միջոցները շատ սահմանափակ, հատկապես անփող մարդու համար: Ուրեմն անճարությունից առիթից օգտվեցի և Նաֆթի Ընկերության գործի դիմում գրեցի. շաբաթներ պատասխան չստանալով, դիմեցի ՌԻՍՄՆ ԶՕՐՔԻ զինվորական / ուսուցչական ծառայությանը, պարսկերենով՝ «Մեփահե Դանեշ»-ի զինվորություն: Նորստեղծ Ռուսան Զօրքի կենտրոնը ձրիաբար ուղարկեց Անվագ քաղաքի զինվորական կենտրոն և այնտեղ հարցաքննություններից հետո 59 օտար պարսիկ երիտասարդների հետ 2 լեյուն ավտոբուս ուղարկեցին պարսկաստանի հարավային զինավարժության կենտրոն Ծիրազ քաղաքում, որտեղ 6 ամիս խիստ զինավարժություն և ուսուցչական դասավանդություն ստանալուց հետո մեզ ուղարկեցին գյուղացի ժողովրդին ծառայելու և մի քիչ էլ դաստիարակելու: Իմ բաժինն էլ ընկավ Չարմահալ գավառի Արքուլաղ գյուղը որտեղից հայերը 1946 թվին լրիվ գյուղը ներգաղթեց Հայաստան և գյուղը բոլորովին վերաբնակվեց շրջանի պարսիկ ընտանիքներով:

(տես հատուկ բաժին ՌԻՍՄՆ ԶՕՐՔ, «Մեփահե Դանեշ»)

Այսպիսով զինվորություն գնացի և Նաֆթի Ընկերությունը մերոնց տեղափոխեց Անվագ քաղաք, օտար հայ ընտանիքներ էլ սպասում էին իրենց հերթին: Նաֆթի Ընկերությունը թողնում էր Մասչեղ Սուլայմանը:

Մի րոպե կանգ առնենք և մտածենք.

Արդյոք կարելի է իբրև մի սրտցառ հայ մարդ մենք մեր սիրող բացենք և մի քիչ էլ ինքներս մեզ հարց տանք, տեսնենք արդյոք մեր խելքին կը գա պատասխան տանք:

Իբրև ազգ, Ինչ էինք թողնում հետևում և իբրև պատմության դաս, արդյոք կարելի էր այստեղից քանի տարի փորձառությունից մի ազգային բան սովորել թե ոչ: Եթե ազգը տեր ու տիրական ունի պիտի կարողանա այս հսկա պատմական լաբորատորիայից ճակատագրական դասեր քաղի և ինչպես սրտցառ ընտանիքի ծնող, ընտանիք և ազգը պահելու և բարձրունքների հասցնելու համար, կիրառի պահպանողական միջոցներ: Նաֆթի Ընկերությունը իր շահերի համար գաղթ էր կազմակերպել իր գործողներին՝ մեծ մասամբ հայության տեղը փոխել բայց հացի հասնել հենց նույն երկրի մեջ: Նույն պատկերը այս օրերին Թեհրանի և Ջուղայի հայությանն է պատահում, և այս անգամվա կազմակերպողը «ՀԱՅԱՍ» կոչված-ն է... հարց է առաջանում. Ով հայ ժողովուրդ արդյոք այս արտագաղթի նպատակները նույնն են, Այսօրվա 2009-ի Թեհրանի և Ջուղայի արտագաղթը դեպի Լոս Անջելես եւ 1970-ական Մասչեղ Սուլայմանի հայության արտագաղթը դեպի օտար քաղաքներ:

Ուրեմն եկեք ազգովի պատասխանենք ՈՉ, Երկուսի նպատակները շատ տարբեր են, մեկը շինիչ մյուսը քանդիչ: Վստահ գիտենք մեծաթիվ հայեր Մասչեղ Սուլայման, Աբաղան և Նաֆթի Ընկերության օտար փոքր տեղերից մասամբ գաղթում էին իրենց նույն աշխատանքը պահելու համար և միայն հայերը չէին. այլ հայ ու պարսիկ և լրիվ Նաֆթի Ընկերության աշխատակազմն էր. մի փոքրաթիվ հայեր էլ որ աշխատանքները կորցրել էին, իրեն վճարված գումարը վերցրել և Թեհրան կամ Ջուղա էին գնում աշխատանք գտնելու և ընտանիք պահելու նպատակով: Ոչ մի ընտանիքի ղեկավար չէիր կարող գտնել որ մի տեղ գնար ձրի սպրեելու համար որտեղ «ՀԱՅԱՍ» կազմակերպությունն է հայերի տեղը դասավորում Լոս Անջելեսում: Այո գուցա հեռ կա արտագաղթների 70-ականների և 2000 թվերի մեջ: Պատճառը պարզ ու հասկանալի է որ 70-ականների Նաֆթի Ընկերության արտագաղթ կազմակերպելը իր Նաֆթի հորերի շահերից էին բխում և պարզորեն նաֆթի հորերը հենց Պարսկաստանի մեջ էին: Բայց «ՀԱՅԱՍ»-ի արած գործը հայոց ազգի կամավոր փափուկ տեղահանումը «ԵՂԵՆՆ» է, որ ԴԱՄԱՎՈՐՈՒՄ է հայ ընտանիքները իրենց օջախի կաղնին տնից տեղեց պոկեն, շլիքները Հայ ու Հարեհիքից ծռեն և տանեն Լոս Անջելես նորից տնկեն, և Ամերիկայի Լոս Անջելեսի գանձարանին ձեռք մեկնեն և իրենց կաղնին ջրեն, Ընտանիքի ջահելներն էլ գործ ճարեն գործեն սովորեն և քիչ ու շատ ընկնեն Ամերիկայի կյանքի հոսանքի մեջ և մեծ մասամբ հազար հազարների նման հայությունից դուրս խառնվեն Ամերիկայի խառնիխուռը ազգերի մեջ և ինչ որ կուզի թող

լինի: Ախր այս խելքի բան է մի օտար ազգերի, մի օտար երկրացի կազմակերպություն Պարսկաստանում շահ չունենա և սիրող Պարսկաստանի մի փոքրամասնության համար ցավի և ասի, մնացեք լավ ծերացեք, թոշակի որ հասաք մեր «ՀԱՅԱՍ»-ի նավը նստեք արեք մեր տուն ձեր ցավը տանեմ, ու ծեղ տուն ու տեղ կտամ, կպահեն: Ախր եթե էս մեղմունսաց տեղահանումի մեջ դավադրություն չկա, եթե մի ծածուկ նպակ չկա, ինչպես կարելի է այսքան ֆինանսական հիմնարկություն տեսնես և չմտածես որ «բա ախպեր իմ այսքան բարի կամեցող տուն ու տեղ տվողս ՌՎ է, բա այս «ՀԱՅԱՍ»-ները հո այսքան տարի ապա որտեղ էին. կը լինի ասենք երկնքից իրենց դրկեցին Պարսկաստանի հայերին տեր կանգնեն ու ջիգարները մեր համար երվի. դե եթե ոչքան սեր ու սիրական են հայության համար, դե թող մեզ հենց Հայաստան կամ Արցախ տանեն, դա հո Արաբսի մյուս ափը, միթե չէ. էլ ուր եք մեզ ովկիանոսների մյուս կողմը հրավիրում»: Պարզորեն լինում է այսպես եզրակացնել.

- Մասչեղ Սուլայման, Աբաղան և օտար փոքր տեղերի հայության քաղաղից քաղաք փոխադրվողը միայն տեղափոխվել էր և կառուցիչ, որովհետև Հայը իր երկիրը չէր լքում և քանդում:

- Նույն ժամանակ այսպես կոչված Հայի տեր ու տիրական ղեկավարները, իմանա, հասկանա և սովորեն ու կիրառեն որ՝ Հայը ունեվոր ու չքավոր, հարուստ ու աղքատ, գրագիր ու բանվոր մեկ կորիզից է ծիլ առել և ժողովրդի հետ սիրող ու փայփայող հարազատ ծնողի նման և ազգի ամենաբարձր Սեր և հարսությունը ՀԱՅՐԵՆԻԶ-ն է:

- Հայաստան, Արցախ տեղափոխվելը Հայ մարդուն տանում է անմահության:

- Ամերիկա, Լոս Անջելես գնացողների տեղափոխվելը դավադրանքների ճանապարհով քայլ է, որ «ՀԱՅԱՍ»-ը հայի հանդեպ կատարում է, որ նրանք կորչեն և վերջում պիտի մնա դատարկություն, վերջնական կորուստ ինչպես հազարավոր հայեր կորեցին և կորցրին հայությունը Լեհաստանում, Հնդկաստանում, Անգլիայում:

- 1956 թվականի “TIMES MAGAZINE- little Armenia in Arizona, by Secretary of State John Foster Dulles” Փոքր Հայաստան տեղծել Հայաստանի կյանքին հոգեհարազատ միջավայր և լրիվ հայ Քրիստոնյա հայության այնտեղ հավաքել Ամերիկայի ԱՐԻՉՈՆԱ նահանգում. Այստեղ այս օրերին կատարվում է 50 տարի այդ թվականից անց Պարսկաստանի հայության տեղահանումը «ՀԱՅԱՍ»-ի միջոցով:

- Հայաստանի շուրջը իր հայ ժողովրդից դատարկում են և այս դավադրություն է Հայաստանը նվազեցնելու համար և կարելի է մտադր ուղիղ դնես «ՀԱՅԱՍ»-ի կազմակերպողների վրա, «ՀԱՅԱՍ»-ը եթե ճիշտ է ասում թող ԲԱՀԱԻՆՆԵՐԻ-ի համար բարեգործություն անի որ հոգեկան նեղության մեջ են ոչ թե հայերը: Ուրեմն ով արթուն է պիտի հասկանա որ այս գործը չարիք է, ջարդ է և վերջ:

Շար. 8

Մշակույթ

Հայ-իրանական դիվանագիտական առնչությունները (Պատմական համառոտ ակնանկ)

Դր. Էր. Բաղդասարյան
www.Edic-Baghdasarian.com
edbagh@yahoo.com

1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծվեց անմիապահպան պայմաններ, թուրքական զորքերը խախտելով ռուսական Կովկասյան բանակի հետ կնքված զինադադարը, 1918 թ. հունվարին հարձակում սկսեցին Անդրկովկասի ուղղությամբ: Չհանդիպելով լուրջ դիմադրության (որովհետև այդ ժամանակ Կովկասյան ռազմաճակատը փաստորեն քայքայվել էր), նրանք գրավեցին մի շարք շրջաններ եւ ստեղծեցին վտանգ անդրկովկասյան ժողովուրդների ու մասնավորապես հայերի համար:

Անդրկովկասյան սեյմը, որ ստեղծվել էր փետրվարին, մարտ ամսին Տրապիզոնում բանակցություններ վարեց Թուրքիայի հետ, բայց դրանք ապարդյուն անցան: Թուրքերը շարունակեցին իրենց առաջխաղացումը եւ մարտի 13-ին գրավեցին էրզրումը, ապրիլի ընթացքում՝ Մարիդամիշը, Բաթումը եւ Կարսը: Խորհրդային Ռուսաստանը բողոքեց Գերմանիային:¹

1913 թվականի ապրիլի 22-ին Սեյմը Թուրքիայի ճնշման տակ Անդրկովկասը անկախ հանրապետություն հռչակեց, եւ 1918 թվականի ապրիլի 28-ին թուրքական կառավարությունը արտաքնապես ճանաչեց Անդրկովկասի անկախությունը եւ համաձայնեց վերսկսել հաշտության բանակցությունները: Մայիսի 11-ին Բաթումում կայացած բանակցությունները շուտով ընկան փակուղու մեջ Թուրքիայի անընդունելի պահանջների հետեւանքով: Թուրքական բանակը մայիսի 15-ին հարձակման անցնելով գրավեց Ալեքսանդրապոլը (Գյումրի՝ Լեւինական) եւ շարժվեց դեպի Երեւան: Մայիսի 22-28-ը խիստ կռիվներից հետո հայկական ուժերը հաղթեցին թշնամուն:² Մյուս կողմից դաշնակցականների, վրաց մենշեվիկների ու աղբյուրական մուսավաթականների միջեւ սրված ներքին տարածայնությունների հետեւանքով 1918 թ. մայիսի 26-ին ցրվեց Անդրկովկասի Սեյմը: Նույն օրը, հռչակվեց Վրաստանի, իսկ մեկ օր հետո Ադրբեջանի անկախությունը: Մայիսի 28-ին Թիֆլիսում գումարված Հայ Ազգային Խորհուրդը, Հայաստանը հռչակեց «Անկախ հանրապետություն»:³

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման առաջին իսկ օրերից հայ եւ պարսիկ կողմերն իրենց ցանկությունը հայտնեցին դիվանագիտական եւ առետրական կապեր ստեղծելու համար: Թեեւ հայ-իրանական հարաբերությունների կարգավորման հարցում առավել շահագրգռված կողմը Հայաստանն էր, բայց պարսկական կողմը մույնպես շահագրգռված էր՝ հատկապես առետրական կապերի հաստատման հարցում: 1918 թ. դեկտեմբերին Երեւան ժամանած պարսկական պատվիրակությունը Հայաստանի կառավարության հետ առետրա-տնտեսական հարցերի շուրջ բանակցություններ վարելու լիազորություններով էր եկել:⁴

1919 թ. հունիսի 11-ին ՀՀ վարչապետ եւ արտգործնախարարի պաշտոնակատար՝ Ալ. Խատիսյանը Իրանի շահական կառավարության վարչապետ Վոսադ-օդ-Ղոլվեին հեռագրում է հայ եւ պարսիկ ժողովուրդների միջեւ գոյություն ունեցող բարեկամական կապերն ամրապնդելու եւ մի շարք այլ հարցերի վերաբերյալ եւ խնդրում է Շահի կառավարության համաձայնությունը Հայաստանի հատուկ ներկայացուցչին Թեհրան ուղարկելու համար:⁵

Հունիսի 18-ի պատասխան հեռագրով, որը Ալ. Խատիսյանին հանձնեց Երեւանում պարսկական հյուպատոս Միրզա Ասադոլլա խան Մանի-օլ-Մոլլը, Իրանի Շահը հավաստում է իր կառավարության բարյացակամությունն ու ցանկանում, որ հայ ժողովրդի իղձերը կատարվեն:⁷ Օգոստոսի 1-ին Հայաստանի կառավարությունը մի նոր հեռագիր է ուղարկում Թեհրան, ուր սավում է, «որպես Պարսկաստանի կառավարության բարյացակամ պատասխանի հետեւանք, Հայաստանի կառավարությունը նորին կայսերական մեծության Շահի կառավարությանը կից լիազոր ներկայացուցիչ է նշանակում իշխան Հովսեփ Արղաթյանին»:⁸

Նախքան դեսպանի ժամանումը Իրան, իշխանը Իրան է ուղարկում պատվիրակության անդամ Սմբատ Մելիք-

Վարդանյանին (ՀՀ արտգործնախարարության 1919 թ. դեկտեմբերի 5-ի հանձնարարագրով): Թիֆլիսում գտնվող պարսիկ հյուպատոսը խնդրագրով բոլոր պարսկական իշխանություններին հանձնարարում է Ս. Մելիք-Վարդանյանին ամեն կերպ աջակցություն ցույց տան, Բաքվի եւ Էնզելի վրայով Թեհրան մեկնելիս:

Մելիք-Վարդանյանը Թեհրան է ժամանում դեսպան Արղոթյանից առաջ, եւ նախապատրաստում դեսպանի այցը:⁹

Իշխան Հովսեփ Արղոթյանը որպես Հայաստանի հանրապետության առաջին դեսպան, 1919 թ. դեկտեմբերի 24-ին Կասպից ծովի վրայով Էնզելի հասավ (դեկտ. 24-26): Ամսի 27-ին անցավ Ռաշտ (դեկտ. 27-29), ապա Ղազվին (դեկտ. 30 հունվար 3): Նա հունվարի 3-ին Եդ. Թումանյանների առետրական տան տրամադրած երկու ինքնաշարժով մեկնեց Թեհրան: Նույն օրը հասնում է Քարաջ եւ հունվարի 4-ին ժամանում մայրաքաղաք:

Հայկական դեսպատանունը գտնվում էր Խիաբանե Սեփահում (այժմ՝ Էմամ Խոմեյնի) Մարտիրոս խան Դավիթխանյանի¹⁰ տանը կից:

Հաջորդ իսկ օրերին Արղաթյանն այցելեց անգլիական, բելգիական եւ ֆրանսիական դեսպանատները:

Հունվարի 14-ին պատվիրակությունը բանակցություններ վարեց Իրանի ֆինանսների նախարարի հետ՝ ֆինանսական, առետրական եւ երկաթուղային հաղորդակցության հարցերի շուրջ: Հանդիպումներ տեղի ունեցան նաեւ Իրանի զինվորական, հանրային կրթության, փոստ-հեռագրական նախարարների հետ: Հունվարի 9-ին նա ընդունվեց վարչապետ Վոսադ-օդ-Ղոլվեի մոտ: Մի քանի օր հետո, վերջինս փոխայցելության եկավ հայկական դեսպանատուն:

Պաշտոնական ընդունելությունը թագաժառանգի մոտ տեղի ունեցավ 1920 թ. հունվարի 17-ին: Իշխանը ընկերակցությամբ խոհրդական Ք. Հարությունյանի, քարտուղար Ս. Առաքելյանի եւ թարգմանչի պաշտոն կատարող Ալ. Խան Թունյանի, Գոլեստան պալատի Արամանդյա սրահում ընդունվեց թագաժառանգի կողմից, արտաքին գործոց նախարարի հետ:¹¹

Պատվիրակության քարտուղարը՝ Ս. Առաքելյանը, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո պատրաստակամություն էր հայտնել ծառայելու սովետական իշխանությանը, Իրանում Սով. Հայաստանի ժամանակավոր լիազոր ներկայացուցիչ Ֆ. Ռոտշտեյնին ներկայացրած գեկուցագրում Հայաստանի Հանրապետության պատվիրակության հետապնդած խնդիրների մասին այսպես է գրել.

1. Պարսկաստանի հետ կնքել բարեկամության եւ առետրական պայմանագիր, ինչպես նաեւ երկաթուղային ու փոստ-հեռագրական համաձայնագիր:¹²

2. Պարզել պարսկահայերի թիւն, պարսկահայությանը կապել Հայաստանի հետ եւ նրա տեխնիկական ուժերը ներգրավել Հայաստանի շինարարության գործին:

3. Ճշտել ներկա մասին այսպես է գրել Պարսկաստանում եւ Միջագետքում գտնվող գաղթականության թիվը, պարզել պայմանները եւ Հայաստան վերաբնակեցնելու հնարավորությունը:

4. Կապեր հաստատել Հնդկաստանի եւ Միջագետքի հայերի հետ:

5. Պարզել այն միջոցները, որոնք կնպաստեն երկու երկրների միջեւ առետրական հարաբերությունների հաստատմանը:¹³

Սակայն Արղոթյանին չհաջողվեց պայմանագրեր կնքել Իրանի կառավարության հետ այդ հարցերի շուրջ:

Շար. 2

¹ - Հայ ժող. Պատմություն, Երեւան, 1985, էջ 341-342:

² - Նույն տեղում, էջ 342-344:

³ - Նույն տեղում, էջ 344-345:

⁴ - Սամսոն, Դեպքերը հայ-պարսկական սահմանի վրա, «Վեն», հանդես, 1935, թիւ 4, էջ 6:

⁵ - Է. Ա. Չոհրաբյան, Ս. Ռուսաստանը եւ հայ-իրանական հարաբերությունները, Երեւան, 1985, էջ 26:

⁶ - Իրանը Անդրկովկասում դեսպան չունեւ, սակայն Թիֆլիսի հյուպատոսը համրվում էր գլխավոր ներկայացուցիչ եւ կատարում նաեւ դեսպանի պարտականությունները: Է. Բ.

⁷ - Նույն տեղում, էջ 27:

⁸ - Նույն տեղում:

⁹ - Ա. Ամուրյան, ՀՀ պատվիրակության ժամանումը Իրան, Ալիք, Թեհրան, 1976, մայիսի 27:

¹⁰ - Ըստ կենդանի անձանց վկայության՝ Սաիդ Խանյան կամ Սեթխանյան:

¹¹ - Սամսոն, Հայաստանի անդրանիկ դեսպանը Պարսկաստանում, Ալիք, Թեհրան, 1992, հունվարի 25-ից փետրվարի 8-ի համարներ:

¹² - Ալիք, Թեհրան, 1976, մարտի 27:

¹³ - Է. Ա. Չոհրաբյան, նշվ. աշխատություն, էջ 34: